

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE جريدة يومية سياسية وأدبية - المبرة السؤولة، إيشادرويشيان

1500 Լ.Ո. 7694 ՏԱՐԻ, ԹԻԻ 66 (21409) ՈՒՐԱԹ, 30 ՄԱՅԻՍ 2003 10 ԷՁ

Ս. ՓԵՏԵՐՍՊՈՒՐԿԻ ՄԷՁ

ՔՈՉԱՐԵԱՆ - ՇԵՒԱՐՏՆԱԾԷ ՀԱՒԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ս. Փետրսպուրկի 300ամեակին նուիրուած հանդիսութիւններուն մասնակցելու համար, այսօր Ռուսիա կը մեկնի Հայաստանի նախագահ Ռուպերթ Քոչարեանի գլխաւորած պատուիրակութիւնը: Այցելութեան ընթացքին առանձին հանդիպումներ նախատեսուած են Վրաստանի նախագահ Էտուարտ Շեւարտնաձէի եւ Պիլիպոսիոյ նախագահ Ալեքսանտր Լուքաշենքոյի հետ:

Միւս կողմէ, Արարիկի նախագահ Հայտար Ալիե յայտնապէս կը շարունակէ տառապիլ հիւանդութենէն, որովհետեւ ան իր տեղ Ս. Փետրսպուրկ պիտի ուղարկէ վարչապետը: Ռուսիոյ մէջ կը նախատեսուէր Քոչարեան - Ալիե հանդիպում:

ՇԱՐՈՆ - ԱՊՊԱՍ
ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԻ ՊԱՀՈՒՆ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ՆՈՐ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐՈՒ ՁԵՌՆԱՐԿԵՑ ԿԱԶԱՅԻ ԵՒ ԱՅՍՐՅՈՐԴԱՆԱՆԻ ԴԷՄ

Մինչ պաղեստինցի վարչապետ Մահմուտ Ապպաս երկրորդ հանդիպումը կ'ունենար իսրայէլացի պաշտօնակիցին՝ Արիէլ Շարոնի հետ, Երուսաղէմի մէջ, Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշի հետ վեհաժողովի մը նախօրեակին, իսրայէլեան բանակը նոր յարձակումներու կը ձեռնարկէր Կազայի եւ Այսրյորդանանի դէմ:

Իսրայէլեան ուժեր պաղեստինցի մը սպաննեցին Կազայի մէջ, իսկ երկրորդ մըն ալ ժենինի մէջ, յայտնեցին պաղեստինեան աղբիւրները: Անոնք աւելցուցին, որ 24ամեայ Մոհամէտ Քատրա սպաննուեցաւ, երբ իսրայէլեան ուժեր հրասայլերով ներխուժեցին իրանական սահմանի գաղթականներ, ուր խուզարկութիւններ եւ ձերբակալութիւններ կատարեցին: Քատրայի ազգականները ըսին, որ Մոհամէտ վիրաւորուած կը փոխադրուէր իր բնակարանը, երբ իսրայէլացի զինուորներ գոյն տեսած ու սպաննած են:

Իսրայէլեան բանակը յայտնեց, որ 29 հոգի ձերբակալած է իրանականներէն:

Բանակը ներխուժեց նաեւ Այսրյորդանանի ժենին քաղաքը, ուր սպաննեց իսրայէլական ժիհատի անդամ 23ամեայ Սայիտ Ֆահմուտին: Իսրայէլական ժիհատի պատասխանատուներ յայտնեցին, որ Ֆահմուտի սպաննուեցաւ իսրայէլեան ուժերու հետ բախումի մը ընթացքին: Իսրայէլեան բանակին մէջ բանբերը ըսաւ, որ ժենինի ներխուժումին նպատակն էր ականահարել անարեկական կազմակերպութիւններու ենթակառուցները: Բանբերը աւելցուց, որ ժենինի մէջ ինք պաղեստինցիներ ձերբակալուած են: Ժենինի ներխուժումը պատճառ դարձաւ, որ քաղաքապետը՝ Ուսիտ Ապու Մուսայ կոչ ուղղէ մարդասիրական եւ մարդկային իրաւանց պաշտպան միջազգային շարժումներու՝ դատապարտելու առաջարկարարներ, որոնք կը խախտեն բոլոր օրէնքները:

Շար.ը՝ էջ 3

ԸՍՏ ՈՌԻԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ ԱՂԲԻՐՆԵՐՈՒ ՓԵՆԹԱԿՈՆ ԿԸ ՄՇԱԿԷ ԻՐԱՆԻ ԴԷՄ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ ՄԸ

Ազրպէյճանի մէջ Մ. Նահանգներու դեսպան Ռոս Ուիլսոնը երէկ հերքած է ռուսական լրատու աղբիւրներու այն տեղեկութիւնները, թէ փենթակոն կը ծրագրէ Ազրպէյճանը օգտագործել՝ հոնկէ Իրանի դէմ զինուորական գործողութիւններու ձեռնարկելու համար:

Ան Պաքուի մէջ թղթակիցներու յայտնած է, թէ Ուաշինկթըն նման ծրագիրներ չունի:

Ռուսական «Նեգալիսի-մայա կազմեա» թերթը երէկ հաղորդած է, թէ փենթակոն մշակած է իրանի դէմ զինուորական գործողութեան ծրագիր մը, որ կ'ընդգրկէ Ազրպէյճանի եւ Վրաստանի մէջ հաստատուած ամերիկեան ուժերը:

«Զինուորական գործողութեան նպատակն է ամբողջացնել ժողովրդային ըմբոստութիւն մը, որուն վրայ գրաւ դրած է փենթակոն», ըսած է թերթը, որ աւելցուցած է, թէ գործողութիւնը ընթացքի մէջ գնելու թուականը պիտի որոշուի Հինգշաբթի օր (երէկ), Սպիտակ Տան մէջ տեղի ունենալիք ժողովի մը ընթացքին:

Տեղեկագիրը հերքած են նաեւ Ազրպէյճանի եւ Վրաստանի: Ըստ ազգերի պաշտօնատարի մը, յօդուածին նպատակը ականահարել է Իրանի եւ Ազրպէյճանի միջեւ յարաբերութիւնները, որոնք բարելուումի ընթացքի մէջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄԸ ՄԵՐԺՈՒԵՑԱՒ

Հայաստանի Կեդրոնական Ընտրական Ցանձնաժողովը հրապարակեց Հայաստանի Սահմանադրութեան բարեփոխման հանրաքուէի նախնական արդիւնքները: Հանրաքուէի քուէարկութեան մասնակցած է 1 միլիոն 216 հազար 581 քաղաքացի. 563,205ը թեր քուէարկած է, իսկ 550,668ը՝ դէմ:

Նշենք, որ «Հանրաքուէի մասին օրէնք»-ին համաձայն, հանրաքուէի դրուած բարեփոխումներու նախագիծը կ'ընդունուի եթէ անոր նպաստ քուէարկեն քուէարկութեան մասնակցած քաղաքացիներու կէսէն աւելին, միաժամանակ սակայն, անոնց թիւը պէտք է կազմէ ընտրելու իրաւունք ունեցող քաղաքացիներու ցանկերուն ներառուած քաղաքացիներուն մէկ երրորդէն աւելին: Ընտրական ցանկերուն մէջ ներառուած քաղաքացիներու թիւն է 2 միլիոն 234 հազար 993 քաղաքացի, եւ Սահմանադրութեան բարեփոխման համար անհրաժեշտ էր 778,331 թեր ձայն:

Հետեւաբար, Մայիս 25ին հանրաքուէի դրուած Հայաստանի Սահմանադրութեան բարեփոխման նախագիծը ընդունուած չէ:

ՀԱՅԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՀԱՐՑՈՎ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԴԱՐՁԵԱԼ ԿԸ ՓՈՐՁԻ ԽԱՓԱՆԵԼ ՔՈՆԿՐԵՍԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հ. Յ. Դ. Ուաշինկթընի Հայ Դատի գրասենեակը կը հաղորդէ, որ Միացեալ Նահանգներու Քոնկրէսի Ներկայացուցիչներու Տան իրաւական յանձնախումբին կողմէ անցեալ շաբթի Յեղասպանութեան բանաձեւին միաձայնութեամբ հաստատուէն ետք յանձնախումբը հրապարակած է զեկուցում մը, որուն մէջ կոչ ուղղած է Ներկայացուցիչներու Տան բոլոր անդամներուն, որ նիստին քուէարկեն ի նպաստ այս բանաձեւին:

Բանաձեւը կը նշէ ՄԱԿի ցեղասպանութեան կանխարգիլման ուղիւ Միացեալ Նահանգներու կողմէ ընդունման 15ամեակը:

Քոնկրէսի իրաւական

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 85ԱՄԵԱԿԸ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՄԷՁ ՆՇՈՒԵՑԱՒ ՄԵԾ ՇՈՒՔՈՎ



Հայկական բանակը դարձեալ խրոխտ ու յաղթական քայլերով կը տողանցէ Սարդարապատի մէջ

Հայաստանի Ա. Հանրապետութեան 85ամեակին առիթով, 28 Մայիսին, Հայաստանի քաղաքական արագանին այցելեց Սարդարապատի յուշահամալիր: Հայաստանի բանակի տողանցքէն ետք, Հայաստանի նախագահ Ռուպերթ Քոչարեան, Ազգային ժողովի նախագահ Արմէն Խաչատրեան եւ վարչապետ Անդրանիկ Սարգսյան ծաղկեպսակ վետեղեցին Սարդարապատի ճակատամարտի հերոսներու յուշակոթողին: Սարդարապատի յուշահամալիր այցելեցին եւ յարգանքի տուրք մատուցեցին նաեւ բարձրաստիճանի այլ պաշտօնատարներ եւ դեսպաններ: Յուշահամալիր տանող ճանապարհը պարզարուած էր Ետագոյն դրօշներով, իսկ յուշահամալիրի մուտքին վետեղուած էին 1918-20 թուականներուն Հայաստանի ղեկավարներուն յուսանկարները: Օրուան խորհուրդին հաղորդակից դառնալու համար Սարդարապատ այցելեցին նաեւ բազմաճակատ քաղաքացիներ:

Հայաստանի Ա. Հանրապետութեան եւ անկախութեան հերոսամար-



Նախագահ Քոչարեան, շրջապատուած պետական եւ հոգեւորական աւագանիով

տերու 85ամեակին առիթով յատկապէս Սարդարապատի յուշահամալիր այցելեցին նաեւ Հ. Յ. Դ. Բիւրոյի եւ Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամներ, Հ. Յ. Դ. պատգամաւորական խմբակցութիւնը, Հայաստանի իտրիդարական ընտրութիւններուն մասնակցած Հ. Յ. Դ. համամասնական ցանկի անդամները, Հ. Յ. Դ. անդամ նախարարներ, մտաւորականներ, կուսակցականներ եւ համակիրներ:

Հ. Յ. Դ. անունով, ի յիշատակ 1918ի հերոսամարտերու մասնակիցներուն, յուշահամալիրին ծաղկեպսակ վետեղեցին Հ. Յ. Դ. Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Հրանտ Մարգարեան եւ Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ ընկ. Արմէն Ռուստամեան:

«Մեր ժողովուրդը պէտք է գիտնայ այն մեծ աւանդը, ներդրումը, զոր Հ. Յ. Դ. ունեցաւ մեր երկրին անկախութեան նուաճման մէջ», ընդգծեց հաւաքին մասնակից Սոս Սարգսեան:

Պաշտօնական արարողութենէն ետք, Հ. Յ. Դ. Արմալիի կառուցին կապակերպութեամբ տեղի ունեցաւ ընդունելութիւն՝ փառապանծ այս տօնին առիթով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 85 ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Կը բանախօսեն՝

ԳԵՐՊ. ՀԱՅՐ ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ԱԾԳԱՐԵԱՆ
(Հայ Կաթողիկէ պատրիարքական ընդհանուր փոխանորդ)

ԸՆԿ. ՇԱՐԱՆ ԳԱՆՏԱՅԱՐԵԱՆ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 30 Մայիս 2003ին, երեկոյեան ժամը 8:00ին, Յակոբ Տէր Մելքոնեան թափերասարահին մէջ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ

ԱԶՏԱԿ

30 ՄԱՅԻՍ 2003

Մեր կյանքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՅՈՒ 25Ի
ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԵՆ
ԵՒ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

85 ԱՄԵԱԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

հարցեր

23 հարցազրույթներ

Այսօր, «Ազդակ»-ի ցրուիչներուն եւ գրախանութներուն մօտ կարելի է գտնել Հայաստանի անկախութեան 85ամեակին նուիրուած յատուկ թիւը:

60 էջ: Սակ՝ 3000 Լ. Ո.

ՆԱԽԱՐԱՐ ՏԻԱՊ ՅՈՒՇԱՆՈՒԷՐ ՄԸ ՅԱՆՁՆԵՑ ՊՈՒՐԸ ՀԱՄՈՒՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ



Պուրճ Համուտի քաղաքապետարանը, գործակցութեամբ ընկերային ծառայութիւններու կեդրոնին եւ կրթութեան ու բարձրագոյն ուսման նախարարութեան, կազմակերպեց «առողջապահական քերմէս» մը, հովանաւորութեամբ ընկերային հարցերու պետական նախարար Ասատ Տիպալի:

Ձեռնարկին ներկայ գտնուեցան Պուրճ Համուտի քաղաքապետ ընկ. Անդրանիկ Մարտիան, կենսոլորտի նախարարութեան ընդհանուր տնօրէն Պերճ Հաճեան, բարձրագոյն ուսման ծառայութեան կեդրոնի նախագահ Սիհամ Ապուր ժառուէ եւ քաղաքապետական խորհուրդի անդամներ:

Տիպալի խօսքին մէջ շեշտեց պետական եւ սեփական մարզին գործակցութեան անհրաժեշտութիւնը յատկապէս Պուրճ Համուտի քաղաքապետութեան հետ: Ապաս շնորհակարտեց Պուրճ Համուտի քաղաքապետարանի հիմնադրութեան 50ամեակը եւ յուշանուէր մը յանձնեց քաղաքապետին:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ՆՈՐ...

Շարունակուած Ա. Էջէն

Միւս կողմէ, Մահմուտ Ապպաս յայտարարեց, որ յառաջիկայ շաբթուան մէջ պիտի յաջողի Կիւնադուլի մը գծով համաձայնութիւն մը գոյացնել Համաս իսլամական շարժումի հետ: Ապպաս խոստացաւ, որ Համաս պիտի համաձայնի կասեցնելու ահաբեկչական արարքները, «Կանաչ Գիծ» էն եւ պաղեստինեան չըջաններէն ներս: Ապպաս յոյս յայտնեց, որ կարենայ համաձայնութիւն գոյացնել նաեւ իսլամական ժիհադի եւ Թանգրամի հետ, որոնց պատասխանատուներուն հանդիպելու առիթը չէ ունեցած տակաւին: «Կանաչ Գիծ»ը Իսրայէլը Այսրորդանանէն բաժնող սահմանագիծն է:

ԻՍՐԱՅԷԼԻ ռապիտակայնը հաղորդեց, որ Այսրորդանանի Հաւաթ Մաոն բնակեցման վայրի հրեաները ապօրինի երկու դիրքեր հաստատած են իրենց սահմանէն դուրս՝ բլուրի մը վրայ, ուր կը բնակին աւելի քան տասնեակ մը հրեաներ:

ՓԵՆԹԱԿՈՆ ԿԸ ՄՇԱԿԷ ԻՐԱՆԻ ԴԷՄ...

Շարունակուած Ա. Էջէն

մէջ «լուրջ դժգոհութիւն» կայ Իրանի հանդէպ:

Իրանի մէջ ամերիկեան պիւնտրական միջամտութեան մը մասին հարցապնդուելով, Սպիտակ Տան բանբեր Արի Ֆլայշըր այս շաբաթակիսին ըսած է, թէ Մ. Նահանգներ կը ծրագրեն «դիւանագիտական մտեցում մը» պահպանել:

Միւս կողմէ, Ռուսիայ արտաքին գործոց նախարարութիւնը երկէ յայտնած է, թէ Ռաշինկըն պետք է սպասէ, որ ՄԱԿի քննիչները իրենց վճիռը արձակեն Իրանի կորիպային ծրագրին մասին, փոխանակ պայմանաւորութիւններու, թէ կորիպային պէնքեր կը մշակէ:

ՄԱԿի Կորիպային Ռուսիայի Միջազգային Գործակալութեան վարիչները Յունիս 16էն 17 պիտի գումարեն ժողով մը, որուն ընթացքին անոր ատենապետը Մոհամէտ Պարատիի Իրանի կորիպային գործունէութեան մասին պեկուցում պիտի տայ:

Մինչ այդ, Իրան երէկ յայտնած է, որ տեղեակ չէ, թէ «Քալիտա»-ի թիւ երեքը՝ եգիպտացի Սայֆ Ատէլ, իր մօտ բանտարկուած է, հերքելով այն տեղեկութիւնները, թէ կը փորձէ պայն Մ. Նահանգներուն յանձնել, փոխարէնը ձեռք ձգելու համար ընդդիմադիր «Մուսախիտին խալք» պիւնէլ խմբակին դէ-

ՊՈՒՐԸ ՀԱՄՈՒՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ 50ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

ՅՈՒՇԱՆՈՒԷՐԻ ՅԱՆՁՆՈՒՄ



Պուրճ Համուտի եւ Սին Էլ Ֆիլի 23 միութիւններէ կազմուած միջքարէսիրական ժողովը, Պուրճ Համուտի քաղաքապետութեան 50ամեակին առիթով, երէկ, Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտի սրահներէն մէկուն մէջ յուշանուէր մը յանձնեց Պուրճ Համուտի քաղաքապետութեան, զոր ստանձնեց քաղաքապետ Անդրանիկ Մարտիան:

Պուրճ Համուտի եւ Սին Էլ Ֆիլի միջքարէսիրական ժողովի պատասխանատուներէն՝ Պասէմ Համուտան այս առիթով ըսաւ, թէ Պուրճ Համուտի քաղաքապետութիւնը իբրեւ անդամ այդ ժողովին իր աշխուժ մասնակցութիւնն ու օժանդակութիւնը կը բերէ անոր ծրագրներուն իրականացման: Ան նշեց, թէ անոր տարած գործունէութեան եւ գործակցութեան համար շնորհակալութիւն յայտնելու միտումով ժողովը որոշած է յուշանուէր մը յանձնել քաղաքապետութեան, անոր յարատեւ յաջողութիւն եւ մնայուն վերելք մտախոյնով:

Պուրճ Համուտի քաղաքապետութեան անունով խօսք առաւ Ժոզէֆ Քահուաճի, որ ըսաւ, թէ քաղաքապետութիւնը իր ծրագրին մէջ գլխաւոր տեղ տուած է քարէսիրական, ընկերային եւ կրթական ծրագրներու օժանդակութեան եւ իրագործման:

Ան քաղաքապետութեան անունով շնորհակալութիւն յայտնեց միջքարէսիրական ժողովին եւ գնահատեց անոր տարած աշխուժ գործունէութիւնը, բարեփոխական աշխատանքն ու ծառայութիւնները, որոնք կը միտին ժպիտ ուրուագծել բոլորին դէմքերուն վրայ:

«ՎԱՍՏՅ ԶԱՅՆԻ ԱՅՍՈՐԻՄԱՆ ՅԱՅՏԱԳՐՈՒՄԵՐԸ

- **ժամը 8:30**
Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- **ժամը 11:00**
«Աստղեր»
- **ժամը 11:30**
Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
- **ժամը 12:00**
«Խոնք եւ մտածումներ»
Ճահանգուլխտ
- **ժամը 3:00**
Արաբերէն յայտագիր.
«Ծիսխտոյի ողբ պայքար»-ի որում առիթով հարցազրոյց հոգեբուժութեան ընդհ. միութեան տնօրէն, եւ Լիբանանեան համալսարանի բժշկագիտական բաժանմունքի դասախօս տոքթ. Անթուան Պարանի հետ.
- **ժամը 6:00**
«Շայ երգաշարի»
- **ժամը 7:00**
«Շայկական ողբ երաժշտութիւն»
- **ժամը 8:00**
«Մայիս 28»-ի տօնակատարութեան ուղղակի ձայնագրում, Յակոբ Տըր Մելքոնեան սրահէն.

السفير
الديار
الاستقبال
الانوار

29 Մայիսի լիբանանեան օրաթերթերը յուսարձակի տակ առած են լիբանանեան ներքին կեանքը յուզող հարցեր, Իրաքի մէջ տեղի ունեցող յարակուսները ամերիկեան պիւնտրութեան դէմ, Պուշի գլխաւորութեամբ տեղի ունենալիք երկու վեհաժողովներուն կայացումը յառաջիկայ շաբաթ, Մէնուտական Արաբիոյ մէջ 11 կասկածելի անձերու ձերբակալութիւնը:

«Մաֆի» օրաթերթը նշած է, թէ կառավարութեան մէջ երկու բեւեռներ կը խուսափին միջնորդութիւնը կատարելէ, իսկ կրթական թղթածրարին յուժման առնչութեամբ նոր օրինագիծ մը կը մշակուի:

Ըստ թերթին, «Էն. Թի. Վի.» կայանին դէմ ժամանակաւոր կերպով արբանեակային սփռումի կասեցման պատիժ կը տնօրինուի:

«Լիուս»-ի համաձայն, վարչապետ Հարիրի կը յայտարարէ, որ Սուրիոյ եւ նախագահ Լախուտի միջեւ տարակարծութիւններ գոյութիւն չունին եւ թէ իրատեսութիւններն ոչ մէկ պիտի պիտի կատարուի:

«Անուար» դիտել տուած է, թէ շրջանը կը նախապատրաստուի երկու հիմնական վեհաժողովներ գումարելու, իսկ Լիբանանի իշխանութեան պետերը կը ձայնակոչեն երկրէն:

«Տիար» հարց տուած է, որ երկրի կարավարական տարանա՞պ կ'ապրի, թէ նախագահական ճակատամարտ: Ան նշած է, թէ Պրորի կը հրաժարի միջնորդութիւն կատարելէ եւ անոր դերակատարութիւնները կը բացակային:

Ըստ «Քիֆահ Արապի»-ի, Պրորի կը մերժէ միջնորդութիւն կատարել իշխանութեան պետերուն միջեւ տարակարծութիւնները հարթելու համար:

«Պալաք» օրաթերթը նշած է, թէ հաւանական է, որ Լախուտի եւ Հարիրիի միջեւ հանդիպում մը կայանայ Արաբական խորհրդարանական խորհրդաժողովէն առաջ:

Շրջանային եւ միջազգային իրադարձութիւններու կարգին «Նահար» գրած է, թէ Մահմուտ Ապպաս կը

մասնակցի Շարմէլ Ելիի վեհաժողովին, իսկ Ռաշինկըն արաբ ղեկավարներէն կը պահանջէ ստաբիլիտեան պարակցող ներքին մեկուսացումը:

Ըստ թերթին, Իրաքի մէջ ամերիկացիներուն հետ ճակատումը մագլցում կ'արձանագրէ, իսկ Փենթագոնի Բարայէր մասնակց կը դարձնէ Իրաքի վերաշինութեան գործընթացին:

«Իսլամական համագումարին բացումը կատարելով, խաթեմի յայտարարեց, ահաբեկչութիւնն ու ծայփին միջնորդութիւնը աղանդեցին կրօնքին դիմագիծը», գրած է օրաթերթը:

«Լիուս» գրած է, թէ Շարուն եւ Ապու Մապէն կը հանդիպին 29 Մայիսին, իսկ Համաս ակնարկութիւն կը կատարէ Իսրայէլի հետ պինդադար հաստատելու:

Թերթին համաձայն, Շարմէլ Ելիի վեհաժողովը տեղի կ'ունենայ յառաջիկայ շաբաթ՝ Պուշի եւ արաբ վեց ղեկավարներու մասնակցութեամբ:

«Լիուս» դիտել տուած է, թէ ինք ամերիկացիները վիրատուեցան եւ Պաղտատի ու Անապարի մէջ ցոյցեր ծայր առին: Ռաշինկըն Իրաքի մէջ խաղաղութեան հաստատման համար կը

պահանջէ միջազգային ուստիականութիւն մը, որ կազմուած ըլլայ 50 երկիրներէ:

«Իսլամական համագումարը Թեհրանի մէջ կը սկսի իր աշխատանքներուն եւ անոր գլխաւոր նիւթերն են ահաբեկչութեան դէմ պայքարը, միջազգային քարտէսը եւ Իրաքի հարցերը», նշած է օրաթերթը:

«Մուսթաքապալ» իր երէկուան թիւին մէջ լոյս ընծայած է իրաքեան տապալում պետութեան գաղտնի փաստաթուղթերուն, որոնցմէ մեկնելով հարց կու տայ, թէ ի՞նչ կայ կայ Միշէլ Աունի եւ Իրաքի նախկին նախագահ Մատամ Հիւսէյնի միջեւ:

«Անուար» գրած է, թէ Իրաքի մէջ ամերիկեան ուժերը դարձալ

նոր յարակուսներու թիրախ կը դառնան:

Թերթը նշած է, թէ Մէնուտական Արաբիոյ մէջ ձերբակալուեցան 11 անձեր, որոնց շարքին՝ Ռիադի պայթուցումները ծրագրող անձը:

Ըստ «Անուար»-ի, Պիէր Բուէյթ այցելեց եւ անկէ Իրաք պիտի մեկնի, իսկ խաթեմի կը ղուղէ իսլամական երկիրներուն՝ պարակցելու պաղեստինեան դիմադրութեան եւ Իրաքի գերիշխանութեան:

«Տիար» նշած է, թէ Արաբական Լիկան Լեհաստանէն կը պահանջէ միջոցառումներու դիմել Իրաքի ապահովութիւնն ու կայունութիւնը հաստատելու համար:

«Քիֆահ Արապի» դիտել տուած է, թէ Շարուն եւ Ապու Մապէնի միջեւ հանդիպումի շուրջ կասկածներ սկսան յառաջանալ: Պուշ կը հաստատուի արաբական վոյզ վեհաժողովներուն կայացումը, գրած է օրաթերթը:

«Պալաք» նշած է, որ Իսրայիլ կ'առաջարկէ Միշէլ Արեւելի խաղաղութեան շուրջ խորհրդաժողով մը գումարել: Իրան, Ռուսիա եւ Իսլամական համագումարը մերժեցին ամերիկեան սպանալիքները եւ Իրաքի վերաշինութեան ծրագրները:

Ըստ թերթին, Պիէր

կ'այցելէ Իրաքի մէջ հաստատուած բրիտանական ուժերու կեդրոնները, իսկ Անպար նահանգին մէջ յարուած ուժերը մագլցում կ'արձանագրեն:

«Մաֆի»-ի համաձայն, Իսրայէլ կը կանխէ Արապային հանդիպումը բնակեցման ռիզիկոսութեամբ ծրագրով:

Թերթը գրած է, որ Շարէի յայտարարեց, «Ո՛չ կ'ընդդիմանանք եւ ոչ ալ կը պօրակցինք խաղաղութեան քարտէսին»:

«Մէնուտական Արաբիոյ մէջ Միացեալ Նահանգներու դեսպանը նոր յարակուսներ կը նախատեսէ, իսկ Նաէֆ իշխան կը յայտնէ, որ Ռիադի պայթուցումներուն մեղսակից 11 անձեր ձերբակալուած են»:

VALSE
International Cosmetics

Armen Haroutunian & Co.
DORA - Magie Al-Hajj Str. - Tel: 01-265449
Fax: 01-324617 - P.O.Box: 90-150 Beirut-Lebanon

HAIGAZIAN UNIVERSITY
DEPARTMENT OF ARMENIAN STUDIES

Invites you to the centenary celebration of the famous composer

ARAM KHACHATURIAN
(1903-1978)

Presented by **DR. PAUL S. MEERS**
(American University of Beirut)

Guest speaker: **DR. WALID GHOLMIEH**
President of the Lebanese National Higher Conservatory

Live performance - Multimedia presentation

Tuesday, June 3, 2003 - 7:30 p. m.
Haigazian University Auditorium - Kantari, Beirut

BALTAYAN ELECTRONIC

Ա. մասնագիտացող
Պուրճ Համուտի
Արմենիայի պալատը
հեռ. : 01 / 262905

Բ. մասնագիտացող
Տարած. հեռ. : 01 / 259600

ՐԱՅ ԴԱՏ

ՐԱՅ ԴԱՏ

«ԹՈՒՐՔ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ»

ԱՔՉԱՄԻ ԳԻՐՔԻՆ ԱՄՓՈՓ ԾԱՆՕԹԱՅՈՒՄԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՐԴԵՐԸ

Թրքական ազգային գիտակցութեան վերաբերելով վերոյիշեալ կէտերը կարելի է անելցնել անկասկած: Հոս կարեւոր է տեսնել, թէ այդ նշեալ ազգականները ի՞նչ պիտի որոշիչ դեր խաղցած են հայկական ջարդերուն մէջ:

Թուրք ազգային ինքնութիւնը ամենափոքր ցեղային փոքրամասնութիւնն իսկ պատասխանատու նկատեց կայսրութեան մէջ պատահած բոլոր անախորժ դէպքերուն, կայսրութեան փլուզումին, արտաքին ուժերու միջամտութեան: Հայերը՝ կայսրութեան սահմաններուն մէջ մնացած միակ քրիստոնեայ փոքրամասնութիւնը, զոհ գացին իրարու ետեւէ կայսրութեան անկախացած քրիստոնեաներուն, որովհետեւ հայերն ալ, թէեւ քիչ մը ուշ, փորձեցին եւրոպական պետութիւններու միջամտութիւնը ապահովել՝ իրենց շրջաններուն մէջ բարենորոգումներ իրականացնելու համար: Օսմանցիներուն կողմէ հայերու ջարդերու պատմութիւնը շատ երկար է: Հայ պատմագրանքը գայն բաժնած են հինգ շրջաններու.

- Ա. շրջան՝ 1890 - 1909
- Բ. շրջան՝ 1915 - 1917

Մնացեալ շրջաններն ալ կը սկսին 1918էն ետք: Հայերու դէմ գործադրուած ջարդերը զարգացման հետաքրքրական ընթացք մը ունեցած են:

Առաջին շրջանի ջարդերը տեղական ընդթ ունէին եւ սխրեմարիք ձեւով կը գործադրուէին: Գործադրուած ձեւերէն կարելի է իշել:

1) Քիւրտ եւ իսլամ ցեղախումբերուն կողմէ հայերու եւ այլ քրիստոնեաներու ինչքերուն գրաւումը, հայկական գիւղերուն վրայ յարձակումներ, աղջիկներու առեւանգում, գանգուածային սպանութիւններ եւ այլն...

2) Իրրեւ թէ ներքին պատերազմներու, իսլամ-հայ ճակատումներու եւ այլ կռիւներու ընթացքին ջարդուած հայեր:

3) Պետական ուժերու կողմէ տուրքերու հաւաք, աւազակներու եւ զինեալներու հետապնդում, ըմբոստութիւնները ճնշելու պատրուակով կատարուած ջարդեր:

Մասնաւորաբար, 1890ին կազմուած Համիտիէ զորախումբերէն ետք յստակ յետնելի ջարդերու յաճախակիութիւնը եւ սխրեմարիք ըլլալը: Քիւրտներէ կազմուած այս միաւորներուն ծախսը կ'ապահովուէր իրենց կատարած թալանումներուն հասոյթէն:

Առաջին շրջանի մեծագոյն ջարդը 1894-1896 թուականներուն կատարուեցաւ: Մօտաւորապէս 80-100 հազար հայեր ջարդուեցան: 1890ական թուականներէն սկսեալ, հայերու դէմ ջարդերը տարբեր հուսիք մէջ սկսան գործադրուիլ: Ջարդերը այս շրջանին կը կատարուէին այն պատճառաբանութեամբ, թէ պետութիւնը կը փորձէ գոյակ քրիստոնեաներու բնակչութիւնը: Հայերու նկատմամբ սկսան որդեգրուիլ ցեղապաշտութիւնն ու կրօնամոլութիւնը:

Եւրոպացիներուն կողմէ զինուած քրիստոնեաները իր հակակշիռին տակ առնելու համար սուլթան Ապտուլ Համիտ զինեց իսլամները, եւ ամէն առիթով քաջակերպ անոնց տնտես յարձակումները: Հայերու դէմ մղուած հարածանքներն ու ջարդերը նաեւ կը նպատակադրէին իսլամութիւնը համախմբել սուլթանին շուրջ: Այս ուղղութեամբ ոչ միայն անպատիժ կը մնային ոճրագործ ու թալանող իսլամները, այլ նաեւ կը վաճառորդուէին: 1915-1917ի պատահարները տարբեր ընդթ ունին նախորդող շրջաններու հայածանքներէն ու ջարդերէն: Հայկական Հարցը վերջնականապէս լուծելու վճիռը առնուած էր: Այս շրջանը ցեղասպանութեան փորձի շրջանն էր: Հոս պէտք է հարցնենք, թէ «որոնք էին այն դրոշմ պատճառները, որոնք այս որոշումին որդեգրման պատճառ հանդիսացան»: Անկասկած Համաշխարհային Ա. Պատերազմը յարմարագոյն պայմանները ստեղծած էր: Այս պատերազմը մթութեան մէջ անակալարեւածաղի նման բան մըն էր ոչնչանալու դատապարտուած օսմանցիներուն ու իթթիհիստականներուն համար: Փանթուրանական ծրագիրը ջուրը ինկած էր, սակայն, այս պատերազմի նախօրեակին ան վերակենդանացաւ: Այս նոր յոյսերն ալ, սակայն, ի դերեւ ելան՝ պատերազմի առաջին ամիսներուն ընթացքին թուրքերուն կրած իրերայաջորդ պարտութիւններուն պատճառով:

1915Ի ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՐԴԸ

Հայկական Յեղասպանութեան ընդունումը թուական է 24-25 Ապրիլ 1915: Այս թուականը պարզապէս խորհրդանշական իմաստ ունի: Գաղթերն ու սպանդները սակէ շատ առաջ սկսած էին արդէն:

Դէպքերու հոյովոյթէն, ականատեսներու վկայութիւններէն, միտմաններու, հիւանդապահներու տեղեկարարներէն մեկնելով կարելի է ըսել, թէ հակառակ անոր որ դուրսէն դէպքերը անկազմակերպ կը թուէին ըլլալ, սակայն անոնք նախապէս կազմակերպուած ծրագիրի մը հիման վրայ կ'ընթանային: Տեղադիր գիւնդերական պատասխանատուներու իրենց պաշտօնին շահական պատասխանատուներու իրենց պաշտօնին շահական ծրագրումը եւ տեղացի իսլամներուն վրիժառութիւնները, որոնք հազարաւոր մահերուն պատճառ դարձած էին, այնքան ալ անկազմակերպ չէին: Ինչպէս բացատրել տարբեր շրջաններէ տարբեր անձնաւորութեան վկայութիւններէն, տեղեկագիրներուն եւ գրուած յուշերուն նոյնութիւնը:

Այս վերջին իրաքեան պատերազմին թրքական պետութիւնը Հիւսիսէն հաւանական գաղթականները ընդունելու համար պատրաստեց վրանաքաղաք մը: Վրանաքաղաքին մէջ կար հիւանդանոց, դպրոց եւ այլն... Ինչպէս որ շատ պատրաստութիւնները: Որովհետեւ ինչպէս այս բոլոր պատրաստութիւնները: Որովհետեւ կ'անկապէին գաղթականները: Հայերու գաղթին ընթաց-

քին ինչպէ՞ս յայտարարուեցին իրենք չկային: Որովհետեւ անոնք զիտէին, թէ հայ գաղթականները պիտի չհասնէին որոշուած տեղերը: Արագ ակնարկ մը նետենք դէպքերու զարգացման ընթացքին վրայ:

1914ին ռուսահայերը ընդունելով ռուսերու առաջարկը Եւրոպայէն եկած կամաւորներով կազմեցին կամաւորական չորս խումբեր: Իւրաքանչիւր խումբ կը բաղկանար 1000 զինեալներէ: Հակառակ անոր որ այս թիւը մասնաւոր ուժ մը չէր ներկայացնէր, սակայն, Օսմանեան պետութիւնը հայերու այս մէկ արարքը օգտագործեց իբրեւ քարոզչութեան միջոց:

Պատերազմի նախօրեակին յայտարարուեցաւ, որ հայերը անվստահելի են:

6 Սեպտեմբեր 1914ին Օսմանեան պետութիւնը «Յատուկ ծածկագիրով մը հրահանգեց հայերու մեծամասնութիւնը կազմող վիլայէթներու կուսակալներուն, որ շարունակ հսկեն կուսակցական առաջնորդներու գործունէութեան վրայ»:

Պատերազմի սկիզբին հետ սկսան նաեւ դասալքութիւնները: Դասալքութիւններ կատարուեցան նաեւ հայերու կողմէ: Օսմանեան պետութիւնը շատ լաւ ձեւով օգտագործեց այս մէկը: Ան յայտարարեց, թէ զինուորութեան փախուստ տուողները լեռներ ելլելով կազմած են զինեալ խումբեր եւ կայսրութեան ապահովութիւնը վտանգած են:

Պատահած է նաեւ, որ կարգ մը հայեր Օսմանեան պետութեան փախելով միանան ռուսական բանակին եւ կամ զինուելով բարձրանան լեռները: Այս վերջինները կը ճակատէին պետական ուժերուն եւ քրտական թալանող զինեալներու դէմ:

Հայերու դէմ հալածանքները թափ ստացան Յունուար 1914էն ետք, երբ թուրքերը պարտուեցան Սարըզամիշի մէջ: Փետրուար 1915ի հրամանագիրով օսմանեան բանակին ծառայող հայ զինուորները զինաթափ եղան եւ այս անգէն զինուորներով կազմուեցան բանուորներու խումբեր, որոնք պիտի աշխատէին ճամբաներու շինարարութեան եւ բեռնակրութեան համար: Այս խմբակները պիտի ոչնչանային կամ իրենց վատառողջ վիճակին մէջ աշխատած ըլլալուն համար, եւ կամ ալ՝ սպաննուելով:

Ջարդերուն երկրորդ մեծ ալիքը սկսաւ վանի դէպքերէն ետք: Ըստ թրքական թէզիս, Ապրիլ 1915ին վանի մէջ հայերը կ'ապստամբէին: Արողջ մէկ ամիս կը դիմադրեն թրքական բանակին, մինչեւ ռուսական բանակին հասնելը: 24-25 Ապրիլին, այս դէպքը իրրեւ պատճառաբանութիւն գործածելով, Պոստոյ մէջ կը կատարուին ձերբակալութիւններ: Այս շրջաններու մէջ ձերբակալութիւններ կը սկսին 19 Ապրիլին եւ կը շարունակուին մինչեւ 19 Մայիս: Կարգ մը շրջաններու մէջ, ժողովուրդը վախցնելու նպատակով հրապարակներու վրայ կախաղան կը հանուին շատ մը հայեր:

Տարագրութեան պաշտօնական վճիռը կ'առնուի 27 Մայիս 1915ին եւ կը հրատարակուի 1 Յունիսի պաշտօնական թերթին մէջ: Սակայն, տարագրութիւնը արդէն սկսած էր Մարտ ամիսէն: Օրինակի համար, Մարաշի եւ Ատանայի շրջանի հայերը 15 Մարտէն սկսեալ ջրուեցան դէպի Գոնիա, Իրաքի անապատները եւ Տէր Զօր: Մեծագոյն գաղթը եւ ջարդը պատահած է Անատոլիոյ արեւելեան շրջաններէն: Այս վայրերէն գաղթը սկսաւ Մայիսին եւ շարունակուեցաւ մինչեւ Օգոստոսի սկիզբները:

Գաղթը եւ ջարդը տարբեր շրջաններու մէջ տարբեր ոճով գործադրուած են: Կարգ մը տեղեր տեղահանումն միայն քանի մը ժամ առաջ լուր տրուած է: Այլ տեղեր՝ քանի մը օր առաջ: Կարգ մը տեղեր զինուորները հայերուն արգելած են իրենց հետ ապրանք տանի կամ ալ իրենց գոյքերը ծախել: Ցամաքայն դէպք, անոնք, որոնք իրենց հետ հարստութիւն առած էին՝ աւելի կանուխ դատապարտուած էին ջարդուելու:

Գաղթի ենթարկուելիք շրջանները նախապէս կը պարպուէին բրիտանացիներէ: Այն վայրերուն մէջ, ուր կարելի չէր եղած այս մէկը իրագործել, գաղթի առաջին օրն իսկ գաղթականները կը բաժնուէին երկու խումբերու՝ կիներու ու մանուկներու, եւ տղամարդոց: Այս երկրորդ խումբին պատկանողները կամ անմիջապէս կը գնդակահարուէին կամ ալ ճամբու ընթացքին կանաչաւ ձեւերով կը ջարդուէին: Այս ջարդերուն մասնակցած են ոստիկաններ, քուրտեր, շրջանի բնակիչները եւ թէջքիաթը-Մահուաէ խմբակները: Ասոնց ալ միջամտութիւնը շրջանէ շրջան փոխուած է: Կարգ մը շրջաններու մէջ ոստիկանութիւնը պաշտպանած է գաղթականները, իսկ այլ շրջաններու մէջ ժողովուրդը պաշտպանած է գանդի ոստիկաններէն, եւ այլ տեղեր, բոլորը միասին յարձակած են այդ գաղթականներուն վրայ:

Արեւելեան շրջաններու գաղթին աւարտին, սկսաւ Արեւմուտքի եւ Թրակիոյ հայութեան գաղթը:

Գաղթականներու առաջին խմբավայրն էր Հայկապ: Հոս հրաշքով ողջ հասնողները կը դրկուէին կամ Սուրիոյ հարաւը կամ ալ արաբական անապատները: Եւ այս ճամբաները ինկած հայերը կը քալէին դէպի իրենց մահ:

Այս պատկերէն յստակ է, թէ հայերը ոչ միայն ջարդուած են, այլ՝ սպաննուած են զիտումնաւոր կերպով, անօթի եւ ծարաւ ձգուելով:

Տարագրութիւնը իր աւարտին հասաւ 1916ի վերջերս: Արդիւնքը մէջտեղն է: Թալէաթ փաշան 31 Օգոստոս 1916ին Գերմանիոյ մեծ դեսպանի ներկայացուցչին Ֆրենսուազ Լոնգինոսի հետեւեալ կերպով խոստովանեց: «La question Armenienne n'existe plus», այսինքն՝ «Հայկական Հարցը ոչ եւս է»:

Մ. Թ.

(Շար. 2)

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ Կ'ԱՐՄԱՏԱԿՈՐՈՒՄ ԲԱՇՏԱԹԱՂԻ ՄԷՋ

Պատմութիւնը ընտրարշաւ չէ, որ խոստումներով կերտուի ու մոռցուի ընտրութիւններէն անմիջապէս ետք:

Պատմութիւնը կը կերտուի ինքնապահպանման, ինքնապաշտպանական բնագոյով եւ անցնելով ժամանակի քաղաքական խողերուն ու եղանակներուն մէջէն՝ կը մաքրուի եւ իբրեւ ժամանակի ճիշդ ընութեագրում՝ կը հասնի սերունդներուն:

Քաջաթաղի ազատագրումը արդէն պատմութիւն է, որուն 11րդ տարեդարձը նշուեցաւ 18 Մայիսին:

Տակաւին դարաբաղեան շարժումի առաջին օրերուն, երբ Ստեփանակերտի եւ Երեւանի ջրապարակներուն վրայ կը վանկարկուէր «միացում, միացում» բաղձալի կարգախօսը, շատերը կը գիտակցէին, որ ժողովուրդի արեան այս ձգտումին դէմ ոչ մէկ ուժ կրնայ պատենչ կանգնիլ, պարզապէս ժամանակի ու իրադրութեան շրջաններու զարգացումներուն մէջ կը փնտռուէին միացման եղանակներ: Եւրոպական ղեկավարներն ու կազմակերպիչները կը գիտակցէին, որ միացումը արեան կանչ է եւ պիտի անցնի պատմական Շուշիէն: Շուշին միայն օտարին կողմէ գրաւուած բերդաքաղաք էր: Շուշին տիրակալ ամրոց էր, որ իր բարձունքին կը պահէր նաեւ շրջալուծած միացումը, կը պահէր միացման բռնաիրենքը, որ վերադարձնէ իրական տէրերուն:

1992ի գարնան Շուշիի ազատագրումով հաստատուեցաւ հայոց զինուորական ուժին յաղթարշաւը: Շուշիէն սկսաւ կամաւորականութեան ծնած հակառակ բանակին ինքնահաստատումը, եւ իրամատա առ խրամատ, բարձունք առ բարձունք մօտեցաւ, իրագործուեցաւ միացումը, որ անպայման պիտի հաստատուէր յաղթանակով: Մեր ժողովուրդին երկու հատուածներուն միացումը պիտի անցնէր Շուշիի բարձունքով ու Լաչինի ճամբով: Բերդաքաղաքին իրական տէրերը տիրացած էին միացումին բանալիներուն եւ կը մնար դիրք առ դիրք յառաջանալ դարպասին հասնելու համար:

Լաչինի շրջանին ազատագրումը կը մտնէ «Շուշի - Լաչին» զինուորական գործողութեան մէջ, որ կը նկատուէր պարզացումներու մէջ, որ կը նկատուէր ժողովուրդէն ծածկել Շուշի անկումը, յաղթահարել Շուշիէն ետք բանակին մէջ սկսած խուճապն ու խառնաշփոթը, հայկական ուժերը օգտուելով առիթէն, սկսան Շուշի, Լաչին - Չապուի ճամբուն ընդհանուր երթը:

Մինչ ազգային ինքնակալ ինքնակալները վախնալով ներքին քաղաքական գործողութեան մէջ, որ կը նկատուէր պարզացումներու մէջ, կը փորձէին իրենց ժողովուրդէն ծածկել Շուշի անկումը, յաղթահարել Շուշիէն ետք բանակին մէջ սկսած խուճապն ու խառնաշփոթը, հայկական ուժերը օգտուելով առիթէն, սկսան Շուշի, Լաչին - Չապուի ճամբուն ընդհանուր երթը:

10 Մայիսի երեկոյեան ազգայինական ուժերը լայնածաւալ յարձակումներ սկսան Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ամբողջ սահմանագիծին երկայնքին: Սահմանագիծին գրեթէ բոլոր հատուածներուն վրայ զօրաւոր կռիւներ տեղի ունեցան: Հակառակորդը կը փորձեր տարբեր հատուածներուն վրայ յարձակում կատարելով մտնել Արցախի սահմաններէն ներս եւ անով քողագրկել Շուշիի պարտութիւնը:

Սակայն Արցախի ամբողջ սահմանագիծին վրայ կազմակերպուող ինքնապաշտպանութիւնը՝ հայկական կամաւորական ջոկատները միեւնոյն ժամանակ կրցան շեշտակի հարուածներով ըլլատել հակառակորդի Քաջաթաղի հատուածին մէջ տեղակայուած ընդհանուր զինուորական ուժերը, եւ 12 Մայիսին արդէն կը կատարուէին իսպառլաղի, Չարխուրի եւ Լիսազորի զինուորական յենակէտերուն ոչնչացման գործողութիւնները: 16 Մայիսի երեկոյեան եւ 17 Մայիսին հայկական ուժերը արդէն ազատագրած են Շուշիի շրջանի վերջին գիւղերը եւ 18 Մայիսին մտան Քաջաթաղ - Լաչին: Բացուեցաւ կենսաբի ճամբան, միացումը դարձաւ իրականութիւն: Մայիս հինգն ի վեր հայերուն համար եղած է ապրելու, ստեղծագործելու, յաղթելու ամիս եւ Արցախ - Հայաստան միացումը տեղի ունեցաւ Մայիսին: Մայիսը դարձաւ նաեւ միասնութեան ամիս:

Եթէ Շուշին անգամ մը եւս հաստատեց հայ զինուորին յաղթուն պատրաստակամութիւնը, ապա Լաչինի ազատագրութեամբ իրականացաւ մեր ժողովուրդի երկու հատուածներուն բաղձալի միացումը: Տամաշխարհային հանրութիւնը համոզուեցաւ, որ Ստեփանակերտէն երեւան, Երեւանէն Ստեփանակերտ ճաւաղը «միացում» կարգախօսը գոյտ քաղաքական չէ, այլ արեան կանչ է: Կամաւորական ջոկատներուն եւ արցախեան նորաստեղծ ինքնապաշտպանութեան բանակի խիստակութեան դրսեւորումներուն

րուն մարտական ճամբան դարձաւ կենսաբի ճամբայ, ժողովուրդին՝ իրարու ձգտող երկու հատուածներուն համար: Իրականացաւ դարաբաղեան շարժման առաջին եւ ամէնէն բաղձալի կարգախօսը՝ իրողապէս կատարուեցաւ միացումը: Տարածքներու ազատագրման քաղաքականութիւնը պատերազմէն ետք վերածուեցաւ տարածքներու վերաբնակեցման քաղաքականութեան:

Քաջաթաղի վերաբնակեցման գործընթացը սկսաւ հարաւորի պատերազմի տարիներուն: Ներկայիս Քաջաթաղի տասնեակ մը համայնքներ կազմուած են եւ բնակչութիւնը կ'արմատաւորուի իր հողի վրայ: Երբեք չենկտրաւորուեցան օժտելու աշխատանքները հակառակ անոր որ դանդաղ կերպով կ'ընթանան, բայց կամաց-կամաց Քաջաթաղի տարածքը կը լուսատուի: Համայնքներուն մեծամասնութիւնը ունի իր դպրոցները, հակառակ անոր որ ուսուցիչներու պակաս կայ:

Բերձոր քաղաքը սկսած է շնչել իր միջնակարգ եւ երաժշտական դպրոցներով, մսուր - մանկապարտէզով, գրադարանով, բժշկական կէտերով, ազատամարտի եւ պատմութեան թանգարաններով: Քաջաթաղի թիւ մէկ խնդիրը բնակարանաշինութիւնն է եւ դպրոցներու վերանորոգումը: Ճամբաներուն վիճակն ալ լաւ չէ, որովհետեւ տակաւին կարելի չէ կատարել ճանապարհաշինութեան մէջ աշխատանքները:

Քաջաթաղը հայոց վայկունիք գաւառն է, որ հարուստ էր իր պատմական յուշարձաններով եւ եկեղեցիներով: Այսօր ալ Քաջաթաղի մէջ նոր յուշակոթողներ կը կառուցուին, կը վերանորոգուին հինաւուրց եկեղեցիներու ու դպրոցների: Վերանորոգուած դպրոցները մեծ մասամբ անուանակոչուած են նոր օրերու ազատամարտիկներուն անուններով: Ամէնէն հետաքրքրականը այն է, որ Քաջաթաղի բնակչութեան մէջ մեծ թիւ կը կազմեն ազատամարտին մասնակցողներուն ընտանիքները: Ըստ այդ ընտանիքներուն, այս հողը ոչ միայն կը կանչէ, այլ նաեւ թեզ կը դարձնէ իր տէրը:

Ըստ իրականացուող վերաբնակեցման ծրագրերին, Քաջաթաղ վերադարձողները կ'ապահովուին բնակարանով, կը տրուի միասնազգ գրամական օգնութիւն, սեփականութեան իրաւունքով կը յատկացուին գիւղատնտեսական նշանակութեան հողամաս, անասուններ, երկարաժամկէտ վարկեր եւ այլ արտօնութիւններ:

Տնտեսութեան զարգացման թափը գրեթէ աննկատելի է, գլխաւորապէս գիւղատնտեսութեան ու անասնապահութեան մարզերն են, որոնցում ալ կը գրադի բնակչութիւնը:

Եւ այնուամենայնիւ, Քաջաթաղի մէջ ալ հարսանիքներ տեղի կ'ունենան, երեսնաբար կը ծնան: Ու քանի մը տարի եւս, եւ այլեւս այս շրջաններուն մէջ հաստատուելու չեն երեւիլ պատերազմին հետքերը:

ՅԱԿՈՒՅ ԵՎ ՅԱԿՈՒՅ

«Հայաստանի Հանրապետութիւն» (Արեւմտահայերէնի վերածումով)

ՋԱԻԱԽՔԻ ՄԷՋ ՕՏԱՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՄԱՅԱԿԱՆՕՐԷՆ ԿԸ

7րդ Արուեստ



ԿԵՆԴԱՆԻ ԳԾԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՓԱՌԱՏՈՆ՝ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ




«Շիհիրոգ ճընճի» ժապաւեճն տեսարան մը

Կենդանի գծանկարներու շարժապատկերի մարզը եւ արուեստի այս ժանրին զանազան արտայայտչաձեւերը լիրանանեան հանրութեան աւելի եւս ծանօթացնելու նպատակով, այս օրերուն տեղի կ'ունենայ Լիրանանի մէջ Ֆրանսական Մշակութային Կեդրոնին կողմէ կազմակերպուած աննախընթաց փառատօն մը՝ կենդանի գծանկարներու Պէյրութի առաջին ցուցահանդէսը, որուն առաջին կենդանի գծանկարները հանրութեան ներկայացուցեցան 26 Մայիսին: Իր ցուցադրութիւնները կը շարունակէ մինչեւ 1 Յունիս:

Պատկերասփռուի եւ շարժապատկերի սրահներու մէջ ցուցադրուող եւ ընդհանրապէս մանուկ հանգիստ տեսներու նպատակաւ ընտրուած եւ յաճախ շահագիտական նպատակներ հետապնդող կենդանի գծանկարներէն իրենց ոճով ու շօշափած նիւթերով տարբերող, սակայն, շարժապատկերի արուեստի նոյն ժանրին պատկանող այս ժապաւեճները Լիրանան եկած են բազմաթիւ երկիրներէ: Փառատօնը կ'ընդգրկէ յատկապէս Ֆրանսական ու արիտանական կենդանի գծանկարներ: Սակայն կը ցուցադրուին նաեւ չեխական, ճափոնական, լիրանանեան ժապաւեճներ: Նշենք, որ ցուցադրուած կենդանի գծանկարներուն կարեւոր մէկ մասը ցուցադրուած է շարժապատկերի միջազգային փառատօններուն ընթացքին, եւ տիրացած՝ մրցանակներու: Այս խումբին մէջ կը յատկանշուի ճափոնի բեմադրիչ Հաշու Միզաբի «Շիհիրոգ ճընճի» կենդանի գծանկարը, որ 2002ի Պերլինի փառատօնին տիրացած էր «Ոսկեայ Արջ» մրցանակին, ինչպէս նաեւ՝ այս տարուան լաւագոյն կենդանի գծանկարի «Օսքար»ին:

Կենդանի գծանկարներու Պէյրութի առաջին փառատօնին ցուցադրութիւնները կը սկսին առաւօտեան ժամը 10:30ին եւ կը շարունակուին օրուան ընթացքին:

ՉԻԼԻԱԿԱՆ ԺԱՊԱԻԷՆՆԵՐՈՒ ԸԱԲԱԹ



Սիլվիո Կայոզի «Քորոնասիոն» ժապաւեճն որոնազը

1994ին ի վեր չիլիական շարժապատկերի մարզին մէջ որոշ յաջողութիւն արձանագրած եւ սպանախօս երկիրներու թէ միջազգային այլ շարժապատկերի փառատօններու մասնակցած ու մրցանակներ շահած հինգ ժապաւեճներու ցուցադրութեամբ, 26-30 Մայիսին Չիլիի եօթներորդ արուեստը կը ներկայանայ լիրանանեան հանրութեան: Սպանական մշակութային «Սերվանթէս» հիմնարկին եւ Լիրանանի մէջ Չիլիի գեապանատան կողմէ կազմակերպուող այս ժապաւեճներու շարաթիւ տեղի կ'ունենայ «Սերվանթէս» հիմնարկի սրահին մէջ:

Ցուցադրուող հինգ չիլիական ժապաւեճներն են Կոնգարօ Ժիւսթիսիանոյի «Ամիսիա» տրաման, Օրլանտօ Լուպերոյի «Թաքսի փարա թրէս», Անտրէս Ուուտի «Լա Ֆիլար տել յոթ» եւ Քրիստիան Կալազի «Էլ շաթթերօ սենթիմենթալ» կատակերգութիւնները, ինչպէս նաեւ՝ Սիլվիո Կայոզի «Քորոնասիոն» տրաման: Նշենք, որ այս վերջին ժապաւեճին ցուցադրութիւնը տեղի պիտի ունենայ այսօր երեկոյեան ժամը 6:30ին:

www.hamazkayin.com

ՔԱՆՆԻ ՓԱՌԱՏՈՆԸ Ի ԴԵՐԵՒ ՀԱՆԵՑ ՀԱՆՐՈՒԹԵԱՆ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հակառակ Գաննի փառատօնի քննադատներու եւ հանդիսատեսներու ակնկալութիւններուն, շարժապատկերի աշխարհի կարեւորագոյն փառատօնը իր 56րդ փակման հանդիսութեան ցնցում յառաջացուց, երբ մակարդակաւոր «Ոսկեայ դափնի» մրցանակը, փոխանակ դանիացի բեմադրիչ Լարս Վոն թրէյրի «Տոկվիլ» ժապաւեճին, շնորհուեցաւ ամերիկացի բեմադրիչ Կաս Վան Սանթի ու անոր «Էլ Ֆրոնթ» ժապաւեճին: Աւելի զարմանք յառաջացուց այն իրողութիւնը, որ կաս Վան Սանթի իրացան նաեւ լաւագոյն բեմադրիչի մրցանակին: Անոր



Ամերիկացի բեմադրիչ Կաս Վան Սանթի «Ոսկեայ դափնի»-ին հետ

Ֆայվին սը Էֆֆրոնուն» ժապաւեճով մասնակցած բեմադրիչը յաջորդաբար երրորդ տարուան մէջ երկրորդ անգամ է, որ կը

ու աշխարհը: Թէ՛ քննադատներուն ու հանրութեան կողմէ զնահատուած եւ թէ՛ ալ դատական կազմին կողմէ երկու մրցանակի արժանացած ժապաւեճ մըն է քանատացի բեմադրիչ Տենիս Արքանի «Լէս անփասիոն պարպար» ժապաւեճը, որ տիրացաւ լաւագոյն բեմադրութեան եւ լաւագոյն դերասանուհիի (Մարի Ժոզէ Քրուզ) մրցանակներուն:



Իրանցի բեմադրիչ Սամիրա Մախմալպաֆ տիրացաւ դատական կազմին մրցանակին

«Էլ Ֆրոնթ» ժապաւեճը գերազանցաբար տարբերակն է ամերիկեան Քորոնասիոն վարժարանին մէջ պատահած ոճիւններու պատմութեան, որուն վաւերագրական ժապաւեճը՝ «Պաուլինի Ֆոր Քոլումպայն», բեմադրութեամբ ամերիկացի քաղաքական եւ ընկերային գործիչ Մայքլ Մուրի, տիրացաւ այս տարուան լաւագոյն վաւերագրական ժապաւեճին «Օսքար»ին: Իր մրցանակը ստանալու պահուն ինք եւս անակնկալի մատնուած բեմադրիչը յայտարարեց, թէ զարմացած է այս տարուան Քաննի փառատօնին հակամերիկեան գագուտններու բացակայութեամբ:

Իսկ մեծարանքի բաժինով, այս տարուան Քաննի փառատօնը իր յարգանքի տուրքը մատուցեց իտալացի մեծանուն բեմադրիչ Ֆետերիքօ Ֆելլինիի, որուն ի պատիւ փառատօնին ընթացքին տեղի ունեցան անոր ժապաւեճներուն, ցուցադրութիւնները, հանրային երգահանդէսներու շարք մը, ինչպէս նաեւ կեանքին ու գործին նուիրուած վաւերագրական ժապաւեճներ:

Իսկ մեծարանքի բաժինով, այս տարուան Քաննի փառատօնը իր յարգանքի տուրքը մատուցեց իտալացի մեծանուն բեմադրիչ Ֆետերիքօ Ֆելլինիի, որուն ի պատիւ փառատօնին ընթացքին տեղի ունեցան անոր ժապաւեճներուն, ցուցադրութիւնները, հանրային երգահանդէսներու շարք մը, ինչպէս նաեւ կեանքին ու գործին նուիրուած վաւերագրական ժապաւեճներ:

ԺԱՊԱԻԷՆՆԵՐ - ԿԱՐԾԻՔ

- «ՖՈՆ ՊՈՒԹ» (Ամփիր / Տիւն, Եսփաս, Սեթ Էլի, Սոտեթ, Սըալլու 2001, Լաս Սալինաս, Կալաքսի)
- «ՊՐԻՆԿԻԿ ՏՈՒՆ ՏԵ ՀՈՒՄ» (Փլանթ, 201ք, Ապրաժ, Ենքորտ, Ֆրիուէ, Թրիփոլի)
- «ՏԵ ՍԵՅԹՐԻԵՍ ՈՒԼՆՏԵՍ» (Ամփիր / Տիւն, Եսփաս, Սոֆիլ, Սեթ Էլի, Սոտեթ, Սըալլու 2001, Լաս Սալինաս, Կալաքսի, Սըալլու):
- «ԱՅՐԻՍ» (Փլանթ / Ենքորտ, 201ք, Ապրաժ)
- «ԼԱ ԹՈՒՐ ՄՈՆՓՐԱՆԱՍ ԵՆՖԵՆԱՆԱ» (Փլանթ, Ենքորտ, Ապրաժ, 201ք, Ֆրիուէ, Թրիփոլի)
- «ԻՒՆ ՖԱՍ ՏԵ ՍԵՆԱՍ» (Ամփիր / Սոֆիլ)
- «ՖԱՅՆԵԼ ՏԵՍԹԻՆԵՅԵԼ 2» (Ամփիր/Տիւն, Սոտեթ, Կալաքսի)
- «ՏԵ ՈՒԵՅՈՒ ԱՅ ՈՒՌՈՒՐ» (Ամփիր, Եսփաս, Սոտեթ, Սըալլու 2001, Լաս Սալինաս)
- «ՏԵ ԵՓՈՒԿ ՆԻԻՉ» (Փլանթ, 201ք)
- «ՈՒԵԼԵՍՍ ԹՈՒ ԵՆԼԻՆՎՈՒՄ» (Փլանթ, 201ք)
- «ԹԱԵՍԻ 3» (Փլանթ, Ապրաժ, 201ք)
- «ՏՈՒՐ ԹՈՒ ԼՈՒԵ Ե ԿԱՅ ԻՆ ԹԵՆ ՏԵՅՉ» (Փլանթ / Ապրաժ, Եսփաս, Ենքորտ, Ֆրիուէ)
- «ԵՍՍ - ՄԵՆ 2» (Ամփիր / Տիւն, Եսփաս, Սեթ Էլի, Սոտեթ, Սըալլու 2001, Լաս Սալինաս, Կալաքսի)
- «ՃԱՍԹ ՄԵՐԻՍ» (Ամփիր / Տիւն, Եսփաս, Սեթ Էլի, Սոտեթ, Լաս Սալինաս, Կալաքսի)
- «ՏԱՐԵԼԵՍ ՖՈՒԼՉ» (Ամփիր / Եսփաս, Սըալլու 2001)
- «ՏԵ ՖՈՐ ՖԵՏԵՐՉ» (Փլանթ/Ենքորտ, Ապրաժ, 201ք, Ֆրիուէ)
- «ՏԵ ՈՒԵՐՈՒԹԻՍ» (Փլանթ / Ապրաժ, 201ք, Ենքորտ)

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱՋԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետևելու թիւերուն - 258526, 260115 եւ 241274:

«ՏԵ ՌՈՏ ԼԷՍ ԹՐԵԻԼԼԵՏ» ԱՐԺԱՆԱՅԱԻ «ՄՈՒՆՏԷՆՍ» ՇԱՐժԱՊԱՏԿԵՐԻ ՓԱՌԱՏՈՆԻՆ ԵՐԿՈՒ ՄՐՅԱՆԱԿՆԵՐՈՒՆ

Քուորտալի մէջ 15 - 18 Մայիսին տեղի ունեցած «Մոնտէնս» շարժապատկերի միջազգային փառատօնին ընթացքին ցուցադրուած «Տրուտ լէս թրեւլլուտ» Տրուտ Լանտանի «Մոնտէնս» վաւերագրական ժապաւեճը արժանացաւ փառատօնին զլխաւոր երկու՝ լաւագոյն երկար վաւերագրականի եւ լաւագոյն երաժշտութեան ժապաւեճներուն:

Տենիս ձէնթիլինի բեմադրած այս վաւերագրական ժապաւեճը կը ներկայացնէ Հայկական Յեղասպանութիւնը՝ վերապրողներ Գուրգէն Հանճեանի եւ Մեւրիս Հանճեանի ականատեսի վկայութիւններուն ընդմէջէն: Նշենք, որ ժապաւեճին երաժշտութիւնը կը պատկանի Տենիս ձէնթիլինի, իսկ ժապաւեճին պատրաստութեան մասնակցած է Ֆրանսացի բեմադրիչ Միլոշ Գալուստեան:

Ժապաւեճը լաւագոյն վաւերագրականի մրցանակին արժանացած է՝ յաջողական դուրս գալով հինգ մրցակիցներու մէջէն, իսկ լաւագոյն երաժշտութեան մրցանակին՝ ութ մրցակիցներու մէջէն:

Նշենք, որ «Մոնտէնս» շարժապատկերի միջազգային փառատօնը կը նկատուի աշխարհի տարածքին կազմակերպուող շարժապատկերի երրորդ կարեւորագոյն փառատօնը՝ Քաննի եւ «Մանտէնս»-էն ետք:

Նոր ժապաւեճներ



«ՖՈՆ ՊՈՒԹ» Բեմադրիչ ԴՈՒՆ ԵՆՏԵՍԵՐ

Քուորտալի Ֆետրի ստանձնած է իր շրջապատին, նոյնիսկ սիրած անձներուն նկատմամբ անարդար եղող ազդեցիկ Սքիլի դերը, որուն ինքնավստահութիւնը վերջ կը գտնէ, երբ անձանց օձայն մը գայն կը բացտարի: Բողոքի մը անկիւնը գտնուող հեռաձայնի խցիկի մը մէջ: Դժոխքի ժամեր ապրելու իր պատճառով ոճիւն ու մահ տեսնելու ետք, կը հնազանդի իր անտեսանելի «պահապան հրեշտակ»ին եւ կը խոստովանի իր մեղքերը: Հանդիսատեսին ուշադրութիւնը կ'առնող թրիլլը մըն է «Ֆոն պուր»-ը, որուն մէջ յատկանշական է Քուորտալի յաջող խաղարկութիւնը:

«ԼԱ ԹՈՒՐ ՄՈՆՓՐԱՆԱՍ ԵՆՖԵՆԱՆԱ» Բեմադրիչ ԸՄԱԼ ՆԵՄԵՍ

Ֆրանսական կատակերգուի մը, ուր մտրուով քեղանք երկու ընկերներ (Էրիք Ժիւտոր եւ Ռամոն Պետիա) ակնատես կ'ըլլան իրենց աշխատած շէնթիլի գրասենեակներէն մէկուն մէջ իրենց սիրած աղջկան դէմ կատարուող անարդարութիւններուն եւ կ'որոշեն զայն զատել այդ վիճակէն: Սակայն, կ'արձանագրեն անկեղեկ անտեսանելի տարբեր ուղղութիւն կը ստանան, երբ հերոսուհին ի նր կը կատարէ «պետական հարուածը»: Մինչ երկու պարամիտները կը փորձեն կացութիւնը հասկնալ, դեպքերը արագօրէն իրենց ընթացքը կը փոխեն եւ ծիծաղաշարժ կացութիւնները մ'էկը միւսին կը յաջորդեն:

«ՊՐԻՆԿԻԿ ՏՈՒՆ ՏԵ ՀՈՒՄ» Բեմադրիչ ԷՏԵՄ ՇԵՐՔՄԵՆ

Ամերիկեան անտարակալ այլ կատակերգուի մը, որուն մէջ դեր ստանձնած է Սքիլ Մարիլին: Գլխաւոր դերասանին անուրէն արդէն կը յստականան ժապաւեճին հրամցելու իր դասականացած խեղկատակութիւններն ու հիւմորը: Փիլը իր կնոջ մէկ բաժնուած նշանուոր փաստաբան մըն է, որուն դիմաց կը յայտնուի բանուր փախած ոնքագործ մը (Քուրտ Լաքիֆա): Իր անմեղութիւնը հաստատելու համար եւ իր շրջապատը կ'ունենան գուարնայի արկածախնդրութիւններ, որոնք կը յանգնեն ուրախ աւարտի մը:

Պատրաստեց՝ Պ. ՓԱՆՈՍԵԱՆ

ՏՈՔԹԵՕՐԸ

Շարունակում՝ 4րդ էջին

գալին պիտի չհամաձայնի անշուշտ: Մարդ իր դասախոսություններն արդարև չի կրնա: Իրեն համար կ'ընէի, որովհետև զիտի, որ հանոյք կը պատճառեմ իրեն: Եւ հաւատարիմ կերպով ան կու գար Պէյրուսի, Պուրճ Համուս ու Անթիպի: Եթէ լուր տայի, կրնար Այնճար ալ գալ, բայց ես չէի ուզեր չափը անցընել: Ինչ հանոյք էր ու քաջալերանք Տոքթէօրը եւ իր հարազատները նստած տեսնել առաջին շարքի վրայ եւ, միւսներուն հետ, մասնաւոր անոնց ուղղել խօսքս:

Վերջին տարիներուն տիկին Ալիսը լաւ սովորութիւն մը ձեռք ձգած էր. իրիկունը կը հեռաձայնէր մեզի, տեղեկութիւն կ'առնէր ու կու տար: «Ի՞նչպէս էք, մենք ալ լաւ ենք»ը հաճելի յանկերգի մը վերածուած էր: Կը խօսէր Տոքթէօրին եւ իր առողջութեան մասին, կը պատմէր օրուան դէպքերը եւ հարցում կ'ընէր աղջիկներուն ու մեր մասին: Երբեմն ալ «մասնաւոր բան մը չկայ կ'ըսէր», կը գիտնար, որ ամէն ինչ բնական է մեզի համար ալ եւ օրը փակուած կը նկատէր:

Այսպէս է որ մենք օրը օրին տեղեկ կ'ըլլայինք Տոքթէօրի աչքերու վիճակի ծանրացումէն, իր սրտանօթային համակարգի բարդութիւններէն, զաւակներուն ստուած լուրերէն: Ոչ մէկը կը գանգատէր: Տոքթէօրը մասնաւոր էր: Ան համակերպ լաւատեսութեան մարմնացումն էր: Ամէն ինչէն գոհ էր: Երբ աչքերը լաւ կը տեսնէին, ինքնաշարժ կը ըլլէր, գիրք ու թերթ կը կարդար: Երբ անկարող եղաւ այլեւս քչելու եւ կարգալու, վարդը մը գործի կանչեց եւ սկսաւ տիկին Ալիսին ընթերցումը ունկնդրել ու ձայնափութաւ մտիկ ընել: Միեւնոյն հանդարտ լաւատեսութեամբ: Սովորութիւն ունէր ըսելու.

- Ես լաւ եմ, ես մի՛ շտ լաւ եմ:

Այդպէս շարունակուեցաւ մինչեւ իր կեանքի վերջին շաբաթը: Օր մըն ալ տիկին Ալիսին տեղեկատուութիւնը մտահոգիչ երանգ մը ստացաւ: Տոքթէօրը գիշերը անհանգիստ եղած էր եւ՝ Ամերիկեան համալսարանի հիւանդանոցը փոխադրուած: Այնուհետեւ առօրեայ հեռախօսակապը հիւանդանոցէն դարձին կը հաստատէր: Կը պատմէր Տոքթէօրին օրը, բժիշկներուն ըսածները, բայց չէր արտօնէր տակաւին, որ այցի երթանք հիւանդանոց: Արտօնեց Կիրակի օր մը: Կինս ու ես գացինք, տեսանք Տոքթէօրը եւ խօսեցանք իրեն: Ինք խօսեցաւ. թթուածինի դեմակը դէմքին էր: Բայց ճանջաւ երկուքս ալ, աչքերով ու ձեռքի սեղմումով իր ուրախութիւնը յայտնեց մեզ տեսնելուն համար: Տիկին Ալիսին հետ մենք ալ յոյս ունէինք, որ շուտով պիտի բարելաւուէր վիճակը ու կարնէր:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԴԱՍԱՍԿՈՍ ԴԱՍԱՍԿՈՍ
ՍՕՒԷ ԾԱՌՈՅԵԱՆԻ (Ծնեալ՝ ԳԱԼՈՒՍԵԱՆ) մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 1 Յունիս 2003, Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀԱՅՐԱՊԵՏ ԳԱՐԴՇԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 1 Յունիս 2003, Անթիպիսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5448 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

- | | |
|---|--|
| <p>ՇՈՒՆ ԵՆՃԱՆԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ:</p> <p>2. Տափակ դղման - 2իրը, քանքար:</p> <p>3. Կրկնուած տառեր - Այլ խօսքով - Սուտանի լիճներէն:</p> <p>4. Առաջիկ - Ուրուագիծ:</p> <p>5. Իգական անուն - Էական բայէն:</p> <p>6. Ա. Մ. Նահանգներէն - 409:</p> <p>7. Այբուբենէն - Սիւրման թղթի ծննդավայրը:</p> <p>8. Լեզուով մը՝ այ՞ո՞ - Աստուածային:</p> <p>9. Գամ - Օսմանեան շրջանի հայ անուանի ճարտարագետ:</p> <p>10. Կերակուրի - Որոշուած գին:</p> | <p>1. Մատին մտուտ ծայրը - Հայկական Տարուսի լեռներէն:</p> <p>2. Շարժիլ - Մոռնորդի:</p> <p>3. Այբուբենէն - Վէտք - Յուցական անակաւ:</p> <p>4. Ստեղծուած տիպար:</p> <p>5. Եւրոպական երկիր - Լեւոն Շանթի երկերէն՝ «... Մարդը»:</p> <p>6. Մեծ մայր - Օրինակէն:</p> <p>7. Հանքային համեմ - Խնդրական:</p> <p>8. Սուրբական լրատու գործակալութիւն - Ամբողջական հաց:</p> <p>9. Հաստատութեան մը վարիչ - Իգական անուն:</p> <p>10. Կնճռոտ, բարդ:</p> |
|---|--|

ԹԻՒ 5447

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՍԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Ք	Ո	Ս	Ս	Ս	Ա	Ն	Ա	Հ
2	Ո	Վ	Ա	Ս	Ս	Ս	Ա	Ր	Ի
3	Ի	Հ	Տ	Պ	Ի	Տ	Մ	Մ	
4	Ե	Թ	Ա	Ա	Ն	Օ	Ր	Է	Ն
5	Ա	Կ	Ա	Ն	Ս	Ո	Ն	Ա	
6	Ա	Կ	Ն	Մ	Ա	Ք	Կ		
7	Մ	Ա	Ն	Ա	Ն	Ե	Զ	Ա	
8	Ե	Լ	Ա	Ր	Ա	Ն	Վ	Ի	Մ
9	Հ	Ա	Ր	Ա	Տ	Ա	Ր	Մ	
10	Ի	Կ	Տ	Ա	Կ	Ք	Ա	Ո	

լի պիտի ըլլար տուն փոխադրել զինքը: Չարաչար յուսախար եղանք օր մը ետք: Տոքթէօրը անդարձ բաժնուեցաւ մեզմէ: Առանց աղմուկ - իրարանցումի, ինչպէս պարած էր, ոտքի մատներուն վրայ կարծես, համեստօրէն, պարզօրէն: Ինք որ ամբողջ կեանքի ընթացքին ուրիշներուն ցան ու հոգը շարժած էր իրրեւ քաղցր բեռ, մարդ չիտանգարեց, մարդու բեռ չեղաւ: Բարեբախտաբար շատ չտառապեցաւ նաեւ: Իրեն արժանի մահ մը ունեցաւ ի վերջոյ. պարզ, հանդարտ, արժանապատիւ:

Ձինք սիրողներուն համար միջիթարական էր այս ամէնը: Բայց անոնք ի՞նչպէս պիտի համակերպին իր բացակայութեան, ի՞նչպէս պիտի վարժուին: Պիտի վարժուի՞ն երբեք: Մենք ի՞նչպէս պիտի ապրինք առանց Տոքթէօրին:

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարահին մէջ օտար դրամացիներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթուկի	32,90 - 33,00 լ.ո.
Իրաքեան տինար	4850,00 - 4860,00 լ.ո.
Քուեյթեան տինար	5032,00 - 5057,00 լ.ո.
Յորդանանեան տինար	2121,00 - 2131,00 լ.ո.
Պահիշտեան տինար	3986,00 - 4011,00 լ.ո.
Ա.Մ.Էմիրութեան տինար	410,75 - 412,75 լ.ո.
Քարաքան ռիալ	413,75 - 415,75 լ.ո.
Սէուական ռիալ	401,70 - 403,70 լ.ո.
Օմանեան ռիալ	3895,00 - 3920,00 լ.ո.
Եգիպտական կինէ	249,00 - 259,00 լ.ո.
Անգլիական քերթին	2476,00 - 2486,00 լ.ո.
Չուիցերիական ֆրանք	1158,00 - 1163,00 լ.ո.
Թրքական լիրա	104,50 - 105,00 լ.ո.
Կիպրական փաուստ	3000,00 - 3025,00 լ.ո.
Ճափոնական հապար եէն	12,60 - 12,70 լ.ո.
Ամերիկեան հապար ֆրանք	13,25 - 13,30 լ.ո.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00 լ.ո.
Քանադական տոլար	1084,00 - 1089,00 լ.ո.
Աւստրալիական տոլար	969,00 - 974,00 լ.ո.
Եւրո	1774,00 - 1784,00 լ.ո.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	140,000 - 145,000 լ.ո.
Իրանեան մէկ ոսկի	126,000 - 131,000 լ.ո.
Օսմանեան մէկ ոսկի	116,000 - 121,000 լ.ո.
Մեքսիկական փէսոս	670,000 - 690,000 լ.ո.

Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի 17,440,000 - 17,640,000 լ.ո.

Մէկ օսն ոսկի 362,00 - 362,50 \$

Մէկ օսն արծաթ 4,60 - 4,62 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրո	1.1768 - 1.1773
Քանադական տոլար	1.3873 - 1.3883
Չուիցերիական ֆրանք	1.2986 - 1.2996
Ճափոնական եէն	118.61 - 118.65
Մէկ սքրելին	1.6438 - 1.6448

Մէկ տոլար 535 դրամ

● ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Գինի Ա. ճշդում Գինի Բ. ճշդում

Ա. կարգ	4 6/8	4 7/8
Բ. կարգ	4 6/8	4 6/8

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

★ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ★

★ ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)

Եթէ ուսանող էք, դաս սորվելու ձեռք բերելու մի տկարացե՛ք: Եթէ գործի մարդ էք, շանցեք շարունակել ձեր սկսած աշխատանքը: Պիտի գնահատուիք:

★ ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)

Այսօր ուշադիր եղէք, որպէսզի գոհարեղէն մը կամ արժեքաւոր առարկայ մը չկորսնցնէք: Կեդրոնացած տրամադրութեամբ աշխատեցէք:

★ ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)

Այսօր ձեր օրը չէ. այսինքն ինչ որ ընէք պիտի ծախողի: Ոմանք ալ մտով ցոյց պիտի տան ձեր սխալները: Ուշադրութեամբ գործեցէք:

★ ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)

Շատ հանգիստ չէք: Ձեր տրամադրութիւնը վատ է, հետեւաբար կանուխ ժամերու անկողին մտքը եւ հեմգոստացէք: Հիւրեր մի՛ ընդունիք այսօր:

★ ԱՌԻԻՄ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)

Ձեր ծրագիրները շուրջ պիտի իյնան մէկը միւսին ետեւէն: Համբերեցէք: Մի՛ մտահոգուիք: Վաղը կրնաք նոր յաջողութիւն մը ձեռք ձգել:

★ ԿՈՅ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Աշխատանքի մէջ ձեր թափած ճիշդութիւնը ճիշդ ձեռով պիտի չարժեւորուի: Բնաւ մի՛ եղողիք, որովհետեւ յաջորդ օրերուն պիտի կարեւոր յաջողութիւն ունենալ:

★ ԿՇԻՌԻ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Կարգ մը «կշիռներ» կը փափաքին արտասահման երթալ: Ինչո՞ւ ոչ: Ոմանք ալ պիտի կատարեն գործի տեղափոխութիւն եւ դրամ վաստկիլ:

★ ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Տնտեսական մեղ վիճակը ձեր երթարդածէն անելի վատ է: Մի՛ յուսահատիք, վաղը ամէն հարց պիտի յստականայ եւ պիտի կարեւոր դաստորել փշոտ հարցերը:

★ ԱՂԵՂՆԱԻՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Իրարացնում, աղմուկ եւ անհանգիստ վիճակ մը պիտի տիրեն ձեր շուրջը: Երեկոյի մը ընթացքին այս ամէնը պիտի պատահին ու դժգոհ պիտի մնաք:

★ ԱՅՄԵՂՋԻԻ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Լարուած աշխատանք կայ ձեր շուրջը: Քիչ մը թեթեւցուցէք եւ մէկ շաբաթ արձակուրդ առէք՝ հանգըտանալու: Մի՛ մտահոգուիք անիմաստ հարցերով:

★ ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)

Կը գղջաք, թէ առաջին քայլը չէք առած ձեռնարկելու կարեւոր գործ մը: Հիմա թոչունը բրած է ձեր ձեռքէն: Բայց յուսահատելու կարիք չկայ:

★ ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)

Այն անգործ, գորս կը սիրէք, բայց որոնք հեռու են ձեզմէ, անոնց կարօտով կ'ապրիք այսօր: Շարունակեցէք հետեւիլ օրուան պահանջներուն: Աշխատանքը պիտի մխիթարէ ձեզ:

ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶՐՈՍԱԿԵՐԶՈՒԹԻՒՆ

ՅԱՐԿԱՐՄԱՆ ԱՐՈՒԵՍԻ ՅՈՒՅԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀ ՄԸ «ԱՐՏԵՔՕ 2003»

Արդէն իսկ 27 Մայիսէն ի վեր հանրութեան տրամադրութեան տակ է ներքին յարդարման ու կահաւորման, յարդարման արուեստի եւ առարկաներու միջին արեւելեան ժամադրավայրի վերածուած «Արտեքօ 2003» ցուցահանդէսը: «Փորձո՛ք» ընկերութեան կազմակերպութեամբ այս մեծածաւալ իրադարձութիւնը տեղի կ'ունենայ «Պիէլ» ցուցարահանդէսի միջին արեւելեան արուեստի արտօնատեղիներու, բացօթեայ վայրերու ու պարտէյներու յարդարման, գրասենեակային շքեղ կառուցներու յարդարման, ինչպէս նաեւ՝ լուսանկարներու, արուեստի կարներու, արուեստի իրերու, կիրառական արուեստի արտօնատեղիներու մասնակցութեամբ կ'աւելցնէ կազմա-



կերպիչներուն այն ակնկալութիւնները, թէ նախորդ տարուան 60 հազար այցելուի թիւը մեծ ռատում պիտի արձանագրէ այս տարի: «Արտեքօ 2003» ցուցահանդէսը յատուկ բաժիններ տրամադրած է կահաւորման, կիրառական արուեստի արտօնատեղիներու, բացօթեայ վայրերու ու պարտէյներու յարդարման, գրասենեակային շքեղ կառուցներու յարդարման, ինչպէս նաեւ՝ լուսանկարներու, արուեստի կարներու, արուեստի իրերու, կիրառական արուեստի արտօնատեղիներու մասնակցութեամբ կ'աւելցնէ կազմա-

ման արուեստի մարզին մէջ իրեց ծառայութիւնները:

Արուեստի տարբեր արտայայտութիւններու ցուցարարութեան կողքին, ցուցահանդէսին ծիրէն ներս տեղի կ'ունենան դասախօսութիւններ ու կիրառական արուեստի նախաձեռնումներ, որոնց մէջ կը յատկանշուին իտալական մշակոյթի նուիրուած քանի մը քաղցր-իւր վրայ երկարող փառատօսին նախաձեռնումներ, որոնց ծիրէն ներս իտալացի մասնագէտներ պիտի ներկայացնեն իտալական յարդարման արուեստին մասնակցութեամբ կ'աւելցնէ կազմա-

Նշենք, որ «Արտեքօ 2003» ցուցահանդէսը իր ղոնէրը այցելուներուն դիմաց քաջ կը պահէ երեկոյեան ժամը 4:00էն մինչեւ գիշերուան ժամը 10:00:

ՕԴԵՐԵՈՒՅԹ

ՌԻՐԱԾ, 30 ՄԱՅԻՍ 2003
ՊԵՅՐՈՒԹ
ՍԱՍԱՄԲ ԱՍՊՈՏ
ՋԵՐՍԱՍՏԻՃԱՆ
ՑԵՐԵԿ՝ 26°C
ԳԻՇԵՐ՝ 21°C
ՌՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 75%



ԱՅՍՕՐ

- Ցուցահանդէս՝ «Արտեքօ 2003», «Պիէլ» մէջ, մինչեւ 1 Յունիս, ժամը 16:00էն մինչեւ 22:00:
- Գորգերու ցուցահանդէս՝ «Թափի տիւ Գոքազ», «Արարտ» բանգարանին մէջ, մինչեւ 12 Յունիս:
- Ձիւղիկեան ժապաւեցներու փառատօս՝ ժամը 18:30ին, «Ներվանդէ» հիմնարկին մէջ:
- Ձեռնդրման արուեստի ցուցահանդէս՝ «Քոնֆրոն-քէյըն», Փոյ Ուաքիմի գործերը, «Ամիալ» ցուցարան, մինչեւ 6 Յունիս:
- Ցուցահանդէս՝ «Էրանմ մեյամ», Միշէլ Թաուրիլի յարդարման արուեստի գործերը, «Էսփաս Էս. Տէ.» ցուցարան, մինչեւ 7 Յունիս:
- Նկարչական ցուցահանդէս՝ Թոգ Հիւսէյնի գործերը, «Ժանիե Թուպէյզ» ցուցարան, մինչեւ 11 Յունիս:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Ժեռն ֆամ», Քարին Ուահպի գործերը, «Էսփաս Էս. Տէ.» ցուցարան, մինչեւ 31 Մայիս:

ԱԶԳԱԿ 50 ՏՆՄԵՐԻ ԱՄՈՒՄԸ 30 Մայիս 1953

ՍԱՆՃԱԲԸ ՍՈՒՐԻՈՅ ԿԸ ՊԱՏԿԱՆԻ ԹՈՒՐԵՍՈՒ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ
ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՏԱՐՈՐԻՆԱԿ ԱԻԱՐՏԱԿԱՆ...

Լիբանանի տղոց պասքեթպոլի ախոյեանություններն առարտականի ճակատում երկրորդ մրցումը, որ սկզբունքով տեղի պիտի ունենար այսօր՝ Ուրբաթ, Ռիա-տիի եւ Սաֆիի միջև, տեղի պիտի չունենայ, որովհետեւ Սաֆիի պատասխանատուները յայտարարեցին, որ կ'ուզեն առանց դաշտ ներկայանալու պարտուած հաշվարկի, որպեսզի արդիւնքը հաւասարի՝ 1-1:

Առաջին մրցումը, որ տեղի ունեցաւ անցեալ Երկու-շաբթի օր, Ֆուադ Եհեսայ դաշտին վրայ, երկրորդ քոր-թըրին աւարտէն առաջ ընդմիջուեցաւ՝ դաշտին վրայ ոչ մարզավայել արարքներու պատճառով: Ռիատի, որ այդ մրցումէն քաշուեցաւ, Լիբանանի պասքեթպոլի ֆետե-րասիոնին կողմէ 20-0 արդիւնքով պարտուած հաշվա-ւեցաւ, թէեւ մրցումին ընդհատման միջոցին 34-33 արդիւնքով կը յառաջանար:

Սաֆիի 2րդ մրցումէն քաշուելը, այժմ կը նշանակէ, թէ յաջորդ երեք մրցումներէն երկու յաղթանակ արձա-նագրող խումբը պիտի հանդիսանայ Լիբանանի 2002-2003 եղանակի ախոյեան:

Երրորդ մրցումը տեղի պիտի ունենայ Կիրակի, 1 Յունիսին, Ֆուադ Եհեսայի դաշտին վրայ, ժամը 20:45ին:

Ա. ՍԷ. ՄԻԼԱՆ ԶԱՐԵՑԱԻ «ՉԵՄՓԻՐՆԶ ԼԻԿ»Ի ԲԱԺԱԿԸ



Ա. ՍԷ. ՄԻԼԱՆԻ մարզիկները՝ իրենց շահած բաժակով

«Չէմփիրնզ Լիկ»ի մրցաշարի աւարտական մրցումին, որ տեղի ունե-ցաւ անցեալ Չորեքշաբթի օր, Մանչեսթըր Ետենայթը-տի «Օլա Թրէֆորտ» դաշ-տին վրայ, Ա. ՍԷ. Միլան փենայթիներով (3-2) պար-տուեցան մասնակցէ ետք Ետենայթըտը, վեցերորդ անգամ ըլլալով բարձրա-ցուց ռաժակը (1963, 1969, 1989, 1990, 1994 եւ 2003):

Ա. ՍԷ. Միլանի այս վե-ցերորդ բաժակը վստահա-բար անմոռանալի եղաւ ամէնէն աւելի՝ խումբին խմբայեան Փաուսթ Մայ-տինի: Համար, ոչ թէ որով-հետեւ ան չորրորդ անգամ ըլլալով կը բարձրացնէր այս բաժակը, այլ որովհե-տեւ Ա. ՍԷ. Միլան իր առա-ջին բաժակը շահած էր քա-նասուէն տարի առաջ, Փաուսթի հօր՝ Սեզարէի հետ:

Մրցումին 120 վայրկ-եանները վերջ գտան 0-0 արդիւնքով, որով ետք դիմուեցաւ անխուսփելի փենայթիներուն: Ա. ՍԷ. Միլանի բերդապահ Տիտա յաջողեցաւ գսպել երեք փե-նայթի, իսկ Ետենայթըտի բերդապահ Ճիանլուիճի Պիլֆոնի երկու փենայթի: Մրցումէն ետք, Ետենայթի մարզիչ Մարսելլօ Լիփի այս պարտութեան պատ-ճառը կատարեց իր մարզիկ-ներուն յոգեածուծութիւնը եւ փիլիսոփայութիւնը Փաւլիստի:



Մրցումից Ետենայթըտի Զախար Զախարով, Ետենայթըտի Միլանի Գրիգորի Ետենայթըտի Եւ Ֆիլիպ Գալստիսի ՍԷՄ Պլէթըրը

տիրացակալութիւնը (կա-խակալուած):

2001ին, Ետենայթըտի կողմէ պաշտօնանկ եղած մարզիչ Քարլօ Անչելոթիի յաջողեցաւ իր նախկին

Ստորեւ՝ «Չէմփիրնզ Լիկ»ի բաժակին տիրացած խումբերը 1992էն ստորեւ:

- 1992-93 Մարսէլ (Ֆրանսա)
- 1993-94 Ա. ՍԷ. Միլան (Իտալիա)
- 1994-95 Ալաբա Ամսթերամ (Հոլանտա)
- 1995-96 Ետենայթըտ (Իտալիա)
- 1996-97 Պարուսիա Տորինօ (Գերմանիա)
- 1997-98 Ռեալ Մատրիլ (Սպանիա)
- 1998-99 Մանչեսթըր Ետենայթըտ (Անգլիա)
- 1999-2000 Ռեալ Մատրիլ (Սպանիա)
- 2000-2001 Պալմա Մալորկա (Գերմանիա)
- 2001-2002 Ռեալ Մատրիլ (Սպանիա)
- 2002-2003 Ա. ՍԷ. Միլան (Իտալիա)

ՄԻՔԱ ԱՇՏԱՐԱԿ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՄՐՅԱՇԱՐՔԻ ԲԱԺԱԿԱԿԻՐ



Միքա Աշտարակի մարզիկները՝ իրենց շահած բաժակով

Հայաստանի ֆուտբոլի բաժակի մրցաշարի աւար-տական մրցումին, Միքա Աշտարակ 1-0 արդիւնքով պար-տութեան մասնակցէ ետք Բանանց Երեւանը, երրորդ ան-գամ ըլլալով արժանացաւ այս տիտղոսին: Մրցումին 88րդ վայրկեանին Միքայի մարզիչ Արմէն Պետիկեան նշանակեց մրցումին «որ» կողմ: Միքայի մարզիչն է՝ Սուրբի Բարսեղեան:

2001ին, Ետենայթըտը Լիկի կողմէ հինգ տարիով կա-խակալուած Միքա Աշտարակին շնորհիւ յառաջիկայ տարիէն սկսեալ վերստին իր մասնակցութիւնը կրնայ ընդլայնել եւրոպական մրցաշարերուն:

2003-2004 եղանակին, Հայաստանի չորս խումբեր իրենց մասնակցութիւնը պիտի բերեն եւրոպական մրցա-շարերուն: Փինիկ Երեւան պիտի մասնակցի «Չէմ-փիրնզ Լիկ»ի մրցաշարին, Շիրակ Գիւմրի եւ Բանանց Երեւան՝ Ետենայթըտի: Ա. ՍԷ. Միլանի մրցաշարին եւ վերջապէս Կոտայք Արտիկեան՝ «Ինթերթիթ» մրցաշարին:

ԵՒՐՈ 2004. ԶՏՈՒՄԻ ՄՐՅԱՇԱՐՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԱՍՏ՝ ՌԻՐԱԿՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԶԱԿԱՏԵԼՈՒ

ԵՒՐՈ-2004ի գտումի մրցաշարին, յառաջիկայ 7 Յունիսին, Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբը, որ մաս կը կազմէ 2- խմբակին, Լվովի մէջ հերթ պիտի ըլլայ Ուկրաինայ:

Երթին, Երեւանի մէջ 2-2 արդիւնքով հաւասարու-թիւն մը արձանագրած Հայաստան այժմ կը գրաւէ չոր-րորդ դիրքը՝ չորս կէտով: Անիկա արձանագրած է մէկ յաղթանակ, մէկ հաւասարութիւն եւ կրած՝ երկու պար-տութիւն:

Պարագուայի դիրքը գրաւող Սպանիա, որ պիտի հիւ-րընկայ Յունաստանը, այժմ ունի 10 կէտ: Այս վերջինը եթէ պարտութիւն մը կրէ եւ միեւնոյն ժամանակ ալ Ուկրաինա պարտութիւն մը կրէ, Հայաստան պիտի Թարձարանայ 2րդ դիրք, իր ետին ձգելով Ուկրաինա եւ Յունաստանը, մէկ կէտի առաւելութիւն ունենալով անոնց վրայ:

Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբին ռումա-նացի մարզիչը՝ Միշայ Սթոյքօ երէկ հրապարակեց իր մարզիկներուն անուանացանկը, զոր կու տանք ստո-րեւ:

ԲԵՐԴԱՊԱՆՆԵՐ.— Ռոման Պետրովսի (Տինամօ Մոսկուա), Արմէն Համբարձումեան (Մարէք, Պուլկա-րիա) եւ Էտէն Ապուլա Պետէն (Փիւնիկ Երեւան):

ՅԵՏՍԱՊԱՆՆԵՐ.— Սարգիս Յովսէփեան (Ջենթիլ Սա-փեթրուպոլի), Կարէն Տոխտյան (Քրիլիա Սովետիկ Սամարա), Յարութ Վարդանեան (Ետենայթըտ), Զուլ-գերիա, Արմէն Պետիկեան (Միքա Աշտարակ), Խոսէ Անտոնի Պիլիպի, Արթուր Մկրտչեան (Փիւնիկ Երեւան) եւ Արկադի Տոխտյան (Միքա):

ՄԻՋԱՊԱՆՆԵՐ.— Ռոմիկ Խաչատրեան (Օլիմպիա-թոս - Նիկոսիա), Արթուր Պետրոսեան (Ետենայթըտ), Քարլ Լոմպէ (Փիւնիկ), Ալպէր Մարգսեան (Արտիկա-Քիւն), Սեդրէյ Առաքելեան (Բանանց Երեւան), Էտուարդ Պարգիկեան (Փիւնիկ), Արարատ Յարութիւնեան (Շի-րակ Գիւմրի) եւ Ռոմէօ Ճենսիփեան (Բանանց):

ՅԱՌԱՋԱՊԱՆՆԵՐ.— Արման Քարամեան, Արտա-ւազգ Քարամեան (Փանախայիկ Պատրաս, Յունաս-տան), Եղիա Եւալուսեան (Շոպրոն, Հունգարիա) եւ Արա Յակոբեան (Բանանց):

Ձ. Կամպիլի դասակարգումը կը ներկայացնէ հետեւ-եայ պատկերը (ընդուն ալ կատարած են չորսական մրցում):

	Թ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Սպանիա	3	1	0	10	2	10
2.- Ուկրաինա	1	3	0	6	4	6
3.- Յունաստան	2	0	2	4	4	6
4.- ՀԱՅԱՍՏԱՆ	1	0	2	3	7	4
5.- Հիւս. Իրլանտա	0	1	3	0	6	1

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻՆ ՈՐՈՇՈՒՄՈՎ

ՄՈՆԱՔՕ ՓՈԽԱԴՐՈՒԵՑԱԻ Բ. ԴԱՍԱԿԱՐԳ

Ֆրանսայի ֆուտբոլի իկայի բաժակի տիրացած եւ Ֆրանսայի ֆուտբոլի 2002-2003 եղանակի ախոյեանու-թեան աւարտին փոխ ախոյեան հանդիսացած Մոնաքօ, Ֆրանսայի ֆուտբոլի ֆետերասիոնին որոշումով փո-խադրուեցաւ Բ. դասակարգ նիւթական օրինազան-ցութիւններու պատճառով:

Եթէ անգամ Ֆրանսայի ախոյեան հանդիսացած իշ-խանապետական կազմը վեց օր ունի իր դատը պաշտպա-նելու համար:

ԺՐՈ

ՍԻՄՈՆԻ ԿԸ ՄՆԱՅ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԳԻՐՔԻՆ ՎՐԱՅ

Իտալիոյ հե-ծելար շաշի շրջակայքին (ժիբօ) 18րդ հանգրուանի մրցումը, որ տե-ղի ունեցաւ երէկ Ասթիէն Քիանալէ (174 քմ.), վերջ գտաւ ի տ ա լ ա ց ի Տարիօ Ֆրիվոյի (Ֆասա Պարթո-յօ) յաղթանա-կով, լեռնային այս հանգրուա-նին արձանա-գրելով 5 ժամ 23 վայրկեան եւ 43 երկվայրկեան արդիւնք մը: 2րդ դիրքը գրաւեց Սայթոյի իտա-լացի վարորդ Ճիլպերթօ Սիմոնի՝ 10 երկվայրկ-եան ուշացումով, իսկ 3րդ դիրքը՝ աւստրիացի ձորձ Թոթցնիկ՝ 2՝ 38՝ ուշացումով:



Ճիլպերթօ Սիմոնի

Հեծելանորդներու ընդհանուր դասաւորումն մէջ Սիմոնի կը գրաւէ պարագլուխի դիրքը, ար-ձանագրելով 79 ժամ 24՝ 54՝ արդիւնք մը: Ան մեծ առաւելութիւն՝ 7՝ 08՝ ունի 2րդ դիրքին վրայ գտնուող իր ազգակիցին՝ Շթեֆանօ Կարծելիի վրայ: 3րդ դիրքին վրայ կը գտնուի ուկրաինացի Եարուսլա Փոփովիչ՝ 7՝ 19՝ ուշացումով:

Ժիբոյի աւարտին մնացած է երեք հանգրուան միայն: Այսօր տեղի կ'ունենայ 19րդ հանգրուա-նի մրցումը՝ Քանելիէն Քասքաթա Տէլ Թոքէ (239 քմ.), վաղը՝ 20րդ հանգրուանի մրցումը՝ Քոնտ-պիոյէն Քանթոն (133 քմ.), իսկ Կիրակի օր 21րդ հանգրուանի մրցումը՝ Իտրոսպալոյէն Միլանօ (33 քմ., ժամացոյցի դէմ մրցում):

Հ. Մ. Ը. Մ. - ԼԵՎԱՄ

ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Շաբաթավերջին Հ. Մ. Ը. Մ. «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» մարզամշակութային մարզադաշտին վրայ տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ. ԼԵՎԱՄ յանձնախումբին կողմէ կազմակերպուած պասքեթպոլի մրցումները, որոնք արդէն իսկ հասած են իրենց աւարտին:

Ստորեւ՝ շաբաթավերջի մրցումներուն յայտագիրը:

ՇԱԲԱԹ, 31 ՄԱՅԻՍ	ԺԱՄ
Մեծ տղաք.- Մեարդպեան -	
Կ. Բ. Վ. (Ֆայնըլ ֆոր) 3:30ին	
Միջակ աղջիկներ.- Ճեմարան -	
Մեարդպեան (կիսաւարտական) 5:15ին	
Միջակ աղջիկներ.- Ս. Խանամիրեան -	
Ս. Հոփսիմեանց (կիսաւարտական) 6:15ին	
Մեծ տղաք.- Ս. Հոփսիմեանց -	
Սոֆիա Յակոբեան (Ֆայնըլ ֆոր) 7:15ին	
ԿԻՐԱԿԻ, 1 ՅՈՒՆԻՍ	
Մեծ տղաք.- Սոֆիա Յակոբեան -	
Կ. Բ. Վ. (Ֆայնըլ ֆոր) 10:30ին	
Մեծ տղաք.- Ս. Հոփսիմեանց -	
Մեարդպեան (Ֆայնըլ ֆոր) 11:30ին	
Մեծ աղջիկներ.- Յոնաշ -	
Մեարդպեան (3րդ դիրքի մրցում) 12:30ին	

ԹԵՆԻՍ. ՌՈՒՆԱ ԿԱՐՈՍ

ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ԴՈՒՐՍ ՄՆԱՅԻՆ Բ. ՀԱՆԳՐՈՒԱՆԻՆ

Ռոլան Կարոսի մրցա-շարի Բ. հանգրուանի մրցումները բախտաբեր չեղան հայ մարզիկներուն համար, որոնք ըրտորն ալ դուրս մնացին այս մրցա-շարէն:

Հայաստանէն Սարգիս Սարգսեան 6-3, 7-5, 3-6 եւ 6-2 արդիւնքով պարտու-թիւն մը կրեց ռումանացի իր մրցակիցին՝ Վիթթոր Հանսեպուէն:

Արժանթինահայ Դա-ւիթ Նալպանտեան (դաս-ւած՝ Տրոյ) բաւական այս-բարելէ ետք դուրս մնաց, հինգ սէթ մրցում մը կա-տարելով Ֆրանսացի իր մրցակիցին՝ Նիքոլա Քու-թիլիոյի դէմ, որ արձանա-գրեց 6-3, 6-3, 4-6, 2-6 եւ 6-1 արդիւնքով յաղթանակ մը: Քիչ մը տարբեր էր պարագան գուլիցերիահայ Մարի-Փայիանի Միքայէլ-եանին համար, որ պար-տուեցաւ աշխարհի թիւ 1 դասուած մարզիկին՝ Սե-րենա Ռիլիքմանէն (Մ. Ն.)՝

6-3 եւ 6-2 արդիւնքով: Այսպիսով մրցաշարը կը շարունակուի առանց հայ մարզիկներու:

Ստորեւ՝ Բ. հանգրուա-նի կարեւորագոյն մրցում-ներուն արդիւնքները:

- ՏՂԱԸ
 - 1.- Լէյքըն Հուլիք (Աւստրալիա) - Նիքոլա Տաիտեմօ (Ռուսիա) 6-3, 4-6, 6-3 եւ 7-6
 - 3.- Խուան Բարիոս Ֆե-րերօ (Սպանիա) - Նիքոլա Մասիլ (Չիլի) 6-2 եւ 3-0 (Նիքոլա մրցումը կիսատ ձգած)
 - 2.- Անտոն Ակասի (Մ. Ն.) - Մարիօ Անիլի (Խրուաթիա) 5-7, 1-6, 6-4, 6-2 եւ 7-5
 - 4.- Քարլոս Մոյա (Սպանիա) - Մարք Ֆիլի-փուսի (Աւստրալիա) 6-2, 6-4 եւ 7-6
 - Ֆլաւիօ Սարեթրա եանին համար, որ պար-տուեցաւ աշխարհի թիւ 1 դասուած մարզիկին՝ Սե-րենա Ռիլիքմանէն (Մ. Ն.)՝
- ԱՂՃԻԿՆԵՐ
 - 8.- Չանտա Ռուպի (Մ. Ն.) - Քարա Պլէյք (Չիլի-մարզպետ) 7-6 եւ 6-3
 - 4.- Ճասպին Հեցիլ - Հարտեկ (Պիւնիքա) - Ելե-նա Քոստանիչ (Խրուա-թիա) 6-2 եւ 6-2
 - 5.- Էմիլի Մորեսմօ (Ֆրանսա) - Լիւնա Քրաս-նորուքցյալ (Ռուսիա) 6-1 եւ 6-2
 - 6.- Լիւնտայ Տեվլըն-փորթ (Մ. Ն.) - Իրոտա Թուլիականովա (Ուկրե-նիստան) 7-5 եւ 6-1
 - Ռիքա Կրանտ (Իտա-լիա) - 20.- Էլենա Պովիլա (Ռուսիա) 7-5 եւ 6-3
 - 25.- Նարայի Տըլի (Ֆրանսա) - Կալա Լէոն Կարսիա (Սպանիա) 6-3 եւ 6-4
 - 23.- Եուլիա Ալմաուրի

ԹՐԲԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԶՕՐԱՎԻԳ ԿԸ ԿԱՆԳՆԻ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ԶԻԳԵՐՈՒՆ

Թուրքիոյ սպայակոյտի փոխ հրամանատարը՝ ԿՕՐ. Եաշար Պուլուբա- նիք երէկ յայտնած է, թէ երկրին բանակը ԿՕՐԱՎԻԳ կը կանգնի Եւրոպա- կան Միութեան անդամակցելու կառավարութեան ճիգերուն, այն արտա- յայտութիւններէն ետք, թէ բանակը դժգոհ է բարեկարգումներէն, որոնց նպատակը երկիրը եւրոպական չափանիշներուն աւելի մօտեցնել է:

Պուլուբա նիք տեղի ունեցած խորհրդածոյցի մը ընթացքին, ան շեշտած է, թէ Կիւնեալ ուժերը չեն կրնար Ե. Միութեան դէմ ըլլալ, որովհետեւ «Ե. Միութիւնը Քեմալ Աթաթուրքի ճշդած արդիականացման թիրախին աշ- խարհաքաղաքական եւ ռազմավարական անհրաժեշտութիւնն է»:

Արտաքին գործոց նախարար Ապտուլլա Կիլ այս շաբաթ Կալոյթով հեքթած է այն տեղեկագիրները, ըստ որոնց՝ բանակին եւ կառավարու- թեան միջեւ յարաւորութիւն գոյութիւն ունի, մինչ բանակը բացայայտօ- ռէն կը քննադատէր իսլամականներու վարչական բանալի պաշտօննե- ռու նշանակումը:

Մինչ այդ, վարչապետ Թայյիփ Էրտողան երէկ յայտնած է, թէ Թուրքիա կրնայ 2012ին Ե. Միութեան լիիրա մէկ անդամ դառնալ, եթէ անիկա ժողովրդավարական անհրաժեշտ բարեկարգումներուն ձեռնարկէ, որ- պէսզի կարենայ 2005ի սկիզբներուն անդամակցութեան բանակցութեանց սկսիլ:

Խորհրդարանին մէջ կայացած քննարկումի մը ընթացքին, ան ընդ- գծած է, որ Անգարա մինչեւ Դեկտեմբեր 2004 ժամանակ ունի իր բոլոր օրէնքները Ե. Միութեան օրէնքներու չափանիշներուն հասցնելու եւ բարեկարգումները անհրաժեշտ ձեւով կիրարկելու համար:

Ան յիշած է, որ Ե. Միութեան ընդարձակման հարցերու յանձնակատար Կունսթըր Վերհոլթըն վերջերս ըսած է, թէ Թուրքիա կրնայ լիիրա անդամ մը դառնալ 2011-2012ին, պայմանաւ որ 2005ի սկիզբներուն բանակցու- թեանց սկսի:

ԻՐԱՔ

ԲՐԻՏԱՆԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏ ԹՈՆԻ ՊԼԵՐ ԱՅՑԵԼԵՑ ՊԱՍՐԱ ԵՒ ՏԵՍԱԿՑԵՑԱՒ ՊՐԵՄԸՐԻ ՇԵՏ



Պլեր կը դիմաւորուի գօր. Ուոլի եւ Պրեմըրի կողմէ

Բրիտանիոյ վարչա- պետ Թոնի Պլեր երէկ այցելեց Պասրա, ուր կեդրոնացած են բրի- տանական ուժերը: Պլեր Սատտամ Հիւսէյ- նը տապալող ճակա- տին ղեկավարներէն առաջինն է, որ Իրաք կ'այցելէ:

Պլերի օրհանուր էջը կատարեց Քուէյթի մէջ, ուրիկէ ան ուղղուեցաւ Պասրա, ուր բրիտա- նացի վարչապետը հանդիպում ունեցաւ Իրաքի մէջ ամերիկա- ցի ղեկավարին՝ Փօլ Պրեմըրի եւ բրիտանա- ցի պատուիրակի ճոն Սոյլըրի հետ: Այս վեր- ջինս ըսաւ, որ Պլերի վեկուցած է այն փաս- տերուն մասին, որոնք ենթադրել կու տան, թէ Իրան կը փորձէ ազդե- ցութիւն բանեցնել Իրաքի հարաւային շրջանին մէջ: Սոյլըր վեկուցած է նաեւ Իրա- քի հարաւային շրջանի իրադարձութիւննե- ռուն եւ իրավիճակին մասին, յատկապէս՝ ապահովական գետնի վրայ:

Պրեմըրի եւ Սոյլըրի հետ տեսակցութիւն- ներ ունենալէ ետք, Պլեր այցելեց շրջանին մէջ գտնուող բրիտա- նական ուժերուն: Բրի- տանացի վարչապետը խօսքը ուղղելով Կիւ- նուրներուն՝ շնորհա- կալութիւն յայտնեց անոնց Սատտամը տա- պալելու գործողու- թեան մասնակցած ըլ- լալու համար: Ան ըսաւ, որ բրիտանական ուժե- րը դերակատար դար- ձած են այս դարաշրջ- անի ճակատագրա- կան արարքներէն մե- կուն՝ ապատագրելով ամբողջ երկիր մը եւ ժո- ղովորդ մը բռնատէր ղեկավարէ մը: Պլեր աւելցուց, որ Իրաքի հա- ռուստ երկիր մըն է, սակայն անոր ժողո- վորդը կ'ապրի չքաւոր վիճակի մէջ: Ըստ Պլե- րի, Սատտամի տապա- լումով՝ բրիտանացի Կիւնուրները օժան- դակած եղան Իրաքի ժողովուրդին, որպէս- Վի երկիրը վերականգ- նեն ու հանգիստ ապ- րին:

Պլեր Պաղտատի ան- կումը կապեց Միջին Արեւելքի նորագոյն իրադարձութիւննե- ռուն, դիտել տալով, որ Սատտամի տապալու- մը պատճառ դարձաւ,

որ շրջանի երկիրները վերատեսութեան են- թարկեն իրենց կեց- ւածքները: Ան ըսաւ նաեւ, որ պաղտատի- ցիներուն եւ Իսրայէլի միջեւ խաղաղութեան գործընթացին վերա- կանգնումն ալ Սատ- տամի տապալումին արդիւնքներէն մէկն է:

Միւս կողմէ, Բրի- տանիա հերքեց այն ամբաստանութիւննե- ռը, ըստ որոնց Պլերի կառավարութիւնը «բարեկարգած» է Իրա- քի հաւաքական քան- դումի ենթադրեալ Կէնքերու թղթածրարը՝ արդարացնելու հա- մար պատերազմի որո- շումը: Յիշեալ ամբաս- տանութիւնը, թէեւ հերքուեցաւ վարչա-

պետին գրասենեակին կողմէ, բայցեւայնպէս մեծ հարցականներ կը կստեղծէ Պլերի եւ անոր կառավարութեան որ- դեգրած կեցուածքին մասին: Ըստ ամբաս- տանութեան, բրիտա- նական գաղտնի սպա- սարկութիւնը, որ պատրաստած էր թղթածրարը մերժած է աւելցնել բաժին մը, որ կը նշէ, թէ Իրաք կարո- ղութիւնը ունի 45 վայրկեանէն քիմիա- կան եւ կենսաբանա- կան հրթիռներ արձա- կելու: Թղթածրարը, երբ Սեպտեմբերին հրապարակուեցաւ, յիշեալ բաժինը աւել- ցուած էր վրան կառա- վարութեան կողմէ:

Ներկայիս, կը տիրէ նաեւ այն կարծիքը, թէ հաւաքական քանդու- մի Կէնքերը գոյութիւն չունենին եւ կարելի պի- տի չըլլայ Կիւնուրը յայտնաբերելու յաղ- թական յայտարարու- թիւնը կատարել:

● ՍՄԵՐԻԿԱՅԻ Կիւ- նուր մը սպաննուե- ցաւ երէկ Պաղտատի մե- յալումի վրայ, ուր յարձա- կումի ենթարկուած էին ամերիկացի Կիւ- նուրներ: Իրաքի դէմ պատերազմը վերջա- ցած ըլլալու յայտարա- րութենէն (1 Մայիս) ի վեր, ամերիկացի 20 Կիւ- նուրներ սպաննուած են:

● ՀԱՐԻՐԱՍԻՈՐ շիի իսլամներ ցոյցի մը մասնակցեցան երէկ Պաղտատի մէջ, բողո- քելու համար ամերիկե- ան գրաման դէմ:

● ՊԱՂՏԱՍԻ շարժա- պատերի սրահներէն մէկը, որ փակման ճնշումի կ'ենթարկուէր կրօնական խմբակնե- ռու կողմէ, ձեռնառում- քերով յարձակումի մը թիրախ դարձաւ:

● ՇԵՐԻՖ Ալի Պրն Հիւսէյն, որ 45 տարի առաջ Իրաքէն հեռա- ցած էր, երբ երկու տա- րեկան էր, յայտարա- րեց, որ ինք օրինական միակ ժառանգորդն է իրաքեան գահին:

ST. MARC
MEDICAL & DIAGNOSTIC CENTER

ՆԵՂ «ԽՈՂՈՎԱԿ» Ի ՄԸ ՄԷՋ ՄՏՆԵԼՈՒ ԿԱՐԻՔԸ
ՉՄՆԱՅ ԱՅԼԵՒՍ.
ԱՐԳԻ ԹԷՔՆՈԼՈԾԻՆ
ԳՈՑ MRI ԳՈՒՆԱՐԻՆԵՑ ԲԱՅ MRI ԿԸ

ՎԱԽՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌ ԶՄՆԱՅ
ԲՈԼՈՐ MRI ԵՎ ԱՐԱՀԱՆՄԱՆ
ԿԱՐԻՔԸ ՈՒՆԵՑՈՂ ՀԻԱՆԴՆԵՐՈՒՆ,
ՇՆՈՐՀԻԻ

ՇՐՋԱՆԻՆ ԱՌԱՋԻՆ ԵՒ ՄԻԱԿ
Բ Ա Յ M R I Ի Ն
ՈՐ ՍԿՍԱԻ ԳՈՐԾԵԼ
ՍԷՆ ՄԱՐՔ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ

ԺԱՄԱԴՐՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝
01-56 66 33
01-57 65 65
01-58 26 58
03-23 88 87

GE SIGNA PROFILE ULTRA
OPEN MRI 15mT/s

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՍԻՈՅ ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ԱՐԵՒԵԼԵՐ ՄԷՋ ՄՈՍԿՈՒԱ ՏԱՐԲԵՐ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԸ ՓՈՐՁԷ ՀԱԿԱԴԱՐՁԵԼ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՔԱՅԼԵՐՈՒՆ

ՄՈՍԿՈՒԱ, 29 (ԱՅՓ).- Չինաստանի, Ռուսիոյ եւ Կեդրոնական Ասիոյ 4 երկիրնե- ռու՝ Ղազախստանի, Նըրքիզիստանի, Տաճիկիստանի եւ Ուզբեքիստանի ղեկավար ներքինի կ'զգուցացուցած են ընդհանրական ճանաչողութեան դէմ պատերազմի մէջ միակողմանի քայլերէ եւ խոստացած են աւելի սերտ կապեր հաստատել իրարու միջեւ, մինչ Մոսկուա կը փորձէ այդ շրջաններուն մէջ ամերիկեան ազդեցութեան հակադրել:

Շանկհայի Գործակցութեան Կազմակերպութիւնը որոշած է 6 երկիր հաշուով մարտին 2004ին վերածել միջազգային իսկական կազմակերպութեան մը:

Հիւրընկալ նախագահ Վլադիմիր Փուժին յայտնած է, թէ 6 ղեկավարները համա- ձայն գտնուած են ՄԱԿի առաջնահերթութեան շուրջ, յատկապէս ակնարկելով իրա- քի դէմ ամերիկեան գիւտարարութեամբ պատերազմին:

Ղեկավարները վերահաստատած են սակայն իրենց յանձնառութիւնը՝ ծայրայե- ղականութեան դէմ ամերիկեան գիւտարարութեամբ պատերազմին, խոստանալով պայ- քարիլ «ճանաչողութեան, ծայրայեղականութեան եւ անդամակցականութեան դէմ», որոնք վտանգ կը սպառնան իրենց անկախ շրջանին:

Ս. ՓԵԹԵՐՍՊՈՒՐԿԻ 300 ԱՍԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

ՃԱՓՈՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԿԸ ԳՏՆՈՒԻ ՌՈՒՄԻԱ

ՄՈՍԿՈՒԱ, 29 (ԱՅՓ).- Մոսկուայի հետ չորս կողմերու սեփականու- թեան գծով Թոքիոյ վե- ճը պէտք չէ արգելակե- րկու երկիրներուն մի- ջեւ ամբողջական գոր- ծակցութիւնը, յայտարա- րեց Ճափոնի վարչապետ Ճունիչիքո Քոյսիմի, Հիւզաքսի որ հրապա- րակուած հարցազրոյցի մը մէջ:

Համաշխարհային Բ. պատերազմի սարսափ խորհրդային ուժերը գրաւած են չորս կողմ- ներ, որոնց վերադարձը կը պահանջէ Ճափոն:

Քոյսիմի կոչ ուղղեց նոր մեկնակետով մը լու- ժելու կողմէն ուսգ- նապը եւ թափ տալ Ճա- փոն - Ռուսիա գործակ- ցութեան, որ շահեկան պիտի ըլլայ երկու երկիր- ներուն եւ նոր կարելու- թիւններու դռներ պիտի բանայ անոնց դիմաց:

Քոյսիմի աւելցուց, որ կողմերու տագնապը երկար ժամանակէ ի վեր լուծում չէ գտած, սակայն ասիական չի նշանակեր, որ տակաւին պէտք է սպա- սել եւ անոր պատճառով ստեղծել երկկողմանի գործակցութիւնը:

Քոյսիմի Հիւզաքսի օր Ս. Փետրասպուրկ ուղ- ղուեցաւ ներկայ ըլլալու համար քաղաքին հիմ- նադրութեան 300 մեակի հանդիսութիւններուն, որոնց պիտի մասնակցին մեծ թիւով ղեկավարներ: Այս առիթով, Քոյսիմի հանդիպում պիտի ունե- նայ նախագահ Վլադի- միր Փոլսինի հետ:

Ըստ Թուրքիոյ խորհրդարանին որդեգրած առա- ջարկներուն, Թրքական քաղաքացիութիւն պիտի տրուի զիմում կատարող ուժէ Թուրք կիպրացիի:

Չորեքշաբթի գիշեր վաւերացուած նոր օրինագիծին նպատակը Հիւսիսային Կիպրոսի բնակիչներուն «ընկե- րային եւ տնտեսական ապագան երաշխաւորել է», ըսած են պաշտօնատարները:

Այդ քայլը տեղի կ'ունենայ մինչ հազարաւոր Թուրք կիպրացիներ չոյն կիպրացիներուն կողմէ տրուած ան- ցազրկներու համար զիմում կը կատարեն:

Կիպրոս, որ միջազգային ճանաչում կը վայելէ, գալ տարի Ե. Միութեան պիտի անդամակցի եւ անոր անցա- ղ իրենքը ունեցողներ պիտի կարենան ազատօրէն շրջա- կալի Ե. Միութեան սահմաններէն ներս:

FUEL CARD

IGOL

գործածեցէք

Պենզոնի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւղը փոխելու կամ զանոնք լուալու պարագային:

Երբ մագուրթ պիտի գնէք, գործածեցէք FUEL CARDը՝ հեռաձայնելով 04 / 715111 - 222 - 333 թիւերուն:

- ▶ MANAR - Տորա
- ▶ ՍԱՐԳԻՍԵԱՆ - Պուրճ Յամուտ
- ▶ BASSIL - Տորա, կամուրջի մօտ
- ▶ AKEL եւ BASSIL - Տորա, «Քրեոսի Լիպանէ» ի մօտ
- ▶ SPEED - Յանքաշ, Կալէրի Իթթիհատ
- ▶ ՀԱՅՎԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ - «Ալմազա»
- ▶ MALLAH - Անթիլիաս, կաթողիկոսարանի դիմաց
- ▶ MALLAH - Յարթ Ղաուարմէ
- ▶ MALLAH - Պսալիմ
- ▶ MALLAH - Ժալ էլ Տիպի մայրուղի
- ▶ CORAL - Էշթեֆիէ, Ս. Յակոբ Եկեղեցւոյ մօտ
- ▶ SAAD - Մար Միայէլ
- ▶ SPEED - Նաիր, «Փեօփ» ընկերութեան մօտ
- ▶ PHOENICIA - Այնճարի մուտքիմ
- ▶ MALLAH - Պապատթ